Funded by
the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

# Հայաստանում Իջևան (AM0000005) Էմերալդ տարածքի պիլոտային կառավարման պլան



Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP | kartECO environmental and energy engineering consultancy

**Պատասխանատվությունը**

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և ՏՀԶԿ-ի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի, ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի» ծրագրի (ԵՄ-ՀՇՄԾ) շրջանակներում:
Այստեղ արտահայտված տեսակետները պատկանում են միայն հեղինակներին և որևէ կերպ չեն կարող համարվել Եվրամիության, նրա անդամների, Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների կամ իրականացնող գործընկերների պաշտոնական կարծիք:
Սույն զեկույցը և դրանում ներառված որևէ քարտեզ չի վնասում որևէ տարածքի կարգավիճակը կամ ինքնիշխանությունը, միջազգային սահմանների սահմանազծումը և որևէ տարածքի, քաղաքի կամ տեղանքի անվանումը:
Զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Թույլատրվում է օգտագործել զեկույցի տեքստը աղբյուրին պատշաճ հղում անելու պայմանով:
Այս փաստաթղթի վաճառքն արգելված է:
Խնդրում ենք մեջբերել այս հրապարակումը որպես ԵՄ-ՀՇՄԾ (2024)՝ Իջևան (AM0000005) Էմերալդ տարածքի պիլոտային կառավարման պլան Հայաստանում:

© 2024, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ / Համաշխարհային բանկ: Բոլոր իրավունքները պաշտպանված են.

1818 H Street NW
Washington DC 20433
Հեռ. 202-473-1000
Համացանց. www.worldbank.org

Լուսանկարը: © Berta Photography

# Երախտագիտություն

Սույն Կառավարման պլանը մշակվել է «kartECO» ընկերության (բնապահպանական և էներգետիկ ճարտարագիտության ոլորտում խորհրդատվական ընկերություն) և ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի (ՀՀ ԳԱԱ) կողմից՝ միջազգային և տեղական փորձագետների հետ համատեղ:

Համահեղինակների թիմը կցանկանար իր անկեղծ երախտիքի խոսքը հայտնել Օթարս Օպերամանիսին (Կենսաբազմազանության ավագ փորձագետ, Համաշխարհային բանկ), Իրինա Ղափլանյանին (Կլիմայի փոփոխության գծով ավագ մասնագետ, Համաշխարհային բանկ) և Կարեն Աղաբաբյանին («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի համակարգողը Հայաստանում)՝ ծրագրի ընթացքում իրենց անգնահատելի առաջնորդության և մենթորության համար:

Թիմն իր երախտագիտությունն է հայտնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ սույն Կառավարման պլանի մշակման ընթացքում անգնահատելի հետադարձ կապի և ներդրումների համար:

# Բովանդակություն

Հապավումներ ........ 6
Սահմանումներ ........ 7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 8
Ընդհանուր տեղեկություններ և սահմանումներ ........ 8
Ուսումնասիրության մանրամասները ........ 8
ԷՏԿՊ-ի կառուցվածքը և գործընթացը ........ 10
Պահպանման պատմություն ........ 11
Պահպանման և կառավարման ներկայիս կառուցվածքը ........ 14
ԷՄԵՐԱԼԴ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ........ 17
Էմերալդ տարածք ........ 17
Հողի օգտագործումը, ներառյալ՝ ներկա կարգավիճակն ու սեփականությունը, և պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոնները (աբիոտիկ, կենսաբանական, մարդկային գործունեություն) ........ 18
Հողօգտագործում և պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոններ (աբիոտիկ, կենսաբանական, մարդկային գործունեություն) ........ 18
Պահպանված օբյեկտ(ներ) (բանաձև 4 և 6) ........ 21
Պահպանման աստիճանի հաշվարկման մեթոդը՝ ըստ թիրախային բնակավայրի տիպի և տեսակների ........ 21
Բնակավայրի տեսակները ........ 24
Տեսակներ ........ 29
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ ........ 43
Պահպանվող օբյեկտի (օբյեկտների) պահպանման նպատակները ........ 43
Պահպանման նպատակների հաշվարկման մեթոդաբանություն՝ ըստ թիրախային բնակավայրի տիպի և տեսակների ........ 43
Բնակավայրի տեսակները ........ 43
Տեսակներ ........ 46
Բնակավայրի պահպանման և տնտեսական գործունեության, դրա զարգացման ներուժի միջև հնարավոր հակասությունների գնահատում ........ 54
Բնակավայրի տեսակները ........ 54
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ........ 56
Գործողությունների ծրագիր (նպատակներ և առաջնահերթ գործողություններ) ........ 56
Բնակավայրի տեսակները ........ 56
Տեսակներ ........ 58
ԱՏ կառավարման միջոցառումներ ........ 66

Գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները. i. մարդ, ii. ժամանակ, iii. ֆինանսներ ..... 71
ՄՈՆԻԹՈՐԻՆԳ, ԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ........ 73
Պահպանման աստիճանի մոնիթտորինգ՝ կապված պահպանման նպատակների հետ ........... 73
Դիտորդական գրանցման գործողությունները և դրանց հետևանքները ........ 73
Պլանի վերանայում ........ 73
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ ........ 74
Հավելված Ա. Թեմատիկ քարտեզներ........ 78
Հավելված Բ. Գործողությունների ծրագրի կառուցվածքը՝ առանձնացված միջոցառումներով85
Հավելված Գ . ՍՏԶ «Իջևան»-ի AM0000005 Էմերալդ տարածքի համար ........ 93

# Հապավումներ

| Հապավում | Անվանում |
| --- | --- |
| ՊՀՀՆՏ | Պահպանության հատուկ հետաքրքրություն ներկայացնող տարածքներ |
| ՀԸԳՀ | Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր Հայաստանի և ԵՄ-ի միջև |
| ՎՏՄԱՄԿ | Վտանգված տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիա |
| ԱՊ | Աշխատանքային պլան |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԵՄ-ՀՇՄԾ | «Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի» ծրագիր |
| ԲԻ | ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ |
| ԱՏ | Անտառային տնտեսություն |
| ՀԿՑ | Հիմնական կատարողականի ցուցիչներ |
| ՇՄՆ | Շրջակա միջավայրի նախարարություն |
| ԿՊ | Կառավարման պլան |
| ՊՏԿՄ | Պահպանվող տարածքների կառավարման միավորներ |
| ԱԳԾ | Ազգային գործողությունների ծրագիր |
| ԲՄԿՓԳ | Բնական միջավայրի և կլիմայի փոփոխության գործակալություն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ԱԳՇ | Առաջնահերթության գործողությունների շրջանակ |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՇՄՀՈՒ | Շրջակա միջավայրի հատուկ ուսումնասիրություններ |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ԲՀՊՏ | Բնության հատուկ պահպանվող տարածքներ |
| ՊՀՏ | Պահպանության հատուկ տարածքներ |
| ՀՆՏ | Համայնքային նշանակության տարածքներ |
| ՀՊՏ | Հատուկ պահպանվող տարածքներ |
| ՏԱ | Տեխնիկական առաջադրանք |
| ՀԲ | Համաշխարհային բանկ |

# Սահմանումներ

- **Պահպանության աստիճան**[1] - Տեղական մասշտաբով (այսինքն՝ պահպանվող տարածքի կամ երկրի) տեսակի կամ բնակավայրի տիպի կարգավիճակի գնահատման արդյունք:
- **Պահպանության կարգավիճակ** - Կենսաաշխարհագրական մասշտաբով տեսակի կամ բնակավայրի տիպի կարգավիճակի գնահատման արդյունք:
- **Պահպանության նպատակները**[2] - Չափելի ցուցիչներ, որոնք կապված են որոշակի տեսակների և բնակավայրերի հետ և կարող են կիրառվել հետագա մոնիթորինգի համար: **Պահպանության նպատակները պետք է լինեն հնարավորինս պարզ ու հստակ և հնարավորություն տան կիրառելու գործնականում պահպանման օպերատիվ միջոցներ: Դրանք պետք է նշվեն հստակ տերմիններով և, որտեղ հնարավոր է, լինեն քանակական թվերով և/կամ չափերով**[3]: Դրանք պետք է ներառեն հետևյալը.
  - Տեսակների պոպուլյացիայի պահպանում կամ աճ:
  - Տեսակների բնակավայրերի տարածքի պահպանում կամ աճ:
  - Տեսակների բնակավայրերի որակի պահպանում կամ բարելավում (այդպիսով բարելավվելով մեկ կամ մի քանի տեսակի բնակավայրերի պահպանման աստիճանը):
  - Բնակավայրի տեսակի պահպանման աստիճանի պահպանում կամ բարելավում:
- **Պահպանման միջոցառումներ** - Իրական մեխանիզմներ և գործողություններ, որոնք պետք է կիրառվեն Էմերալդ տարածքի պահպանման նպատակներին հասնելու համար: Միջոցառումները կարող են լինել ակտիվ և պասիվ (առանց միջամտության):
- **Սահմանամերձ էկոլոգիական միջանցք** - Աշխարհագրական տարածություն՝ սահմանված վարչական և գիտական հիմունքներով, որը պարունակում է ռելիեֆային ձևերով ու բուսական ծածկույթով բնութագրվող էկոհամակարգերի համակցություն և կենսաբազմազանության և լանդշաֆտի պահպանման նշանակություն ունի:
- **Սահմանված տեղամասեր/տարածքներ** - ՀՀ օրենսդրության համաձայն սահմանված պետական արգելոցներ, ազգային պարկեր և արգելավայրեր:
- Էմերալդ ցանցի **տարածքի էկոլոգիական բնույթը** - Էկոհամակարգի բաղադրիչների, գործընթացների և այլ էկոլոգիական առանձնահատկությունների կամ բնութագրերի համադրություն, որոնք նպաստում են տարածքի որակին և գործունեությանը:
- **Էմերալդ տարածքի կառավարում** - Անհրաժեշտ պահպանման ակտիվ կամ պասիվ միջոցառումներ՝ տեսակների պոպուլյացիաների կամ բնակավայրերի որակի ու տարածքի պահպանման կամ ընդլայնման համար: Էմերալդ տարածքի «կառավարման» բոլոր այլ ասպեկտները նույնպես կարևոր են, բայց դրանք պետք է համաձայնեցվեն և կարգավորվեն այս առաջնային նպատակին համապատասխան:
- **Այլ հողեր** - ՀՀ պետական, համայնքային և մասնավոր հողեր:

[1] Էվանս Դ. և Արվելա Մ. 2011. Գնահատում և հաշվետվություն «Բնակելի միջավայրերի մասին» հրահանգի 17-րդ հոդվածի համաձայն. Կենսաբազմազանության եվրոպական թեմատիկ կենտրոն, https://circabc.europa.eu/sd/a/2c12cea2-f827-4bdb-bb56-3731c9fd8b40/Art17-Guidelines-final.pdf

[2] Natura 2000 տարածքների կառավարում: «Բնակավայրեր» 92/43/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածի դրույթները: https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/11e4ee91-2a8a-11e9-8d04-01aa75ed71a1

[3] https://bit.ly/3zbKOun

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Ընդհանուր տեղեկություններ և սահմանումներ

### Ուսումնասիրության մանրամասները

Իջևան Էմերալդ տարածքի կառավարման պիլոտային պլանը (ԷՏԿՊ, AM0000005) իրականացվում է առաջադրանք 3-ի համաձայն, այն է՝ փորձարկել Էմերալդ տարածքների կառավարման հանձնարարականները՝ օգտագործելով 2 տարածք՝ որպես ԵՄ ՀՇՄԾ-ի (EU4Environment) օրինակների ուսումնասիրություն: Իջևանի տարածքը թիրախային օբյեկտների ուսումնասիրության համար ցածր ճնշումներով և սպառնալիքներով օրինակ է, ակտիվ կառավարվող անտառային (և արոտավայրերի) նշանակալի տարածքով և գործնականում գրեթե առանց միջամտող գործողությունների: Սա տարբերվում է Արմաշի տարածքի երկրորդ օրինակից, որը բնորոշվում է նշանակալի անտրոպոգեն գործողություններով այդ շրջանում, ինչպիսիք են ձկնորսությունը քաղցրահամ ջրերում, հարաճուն ճնշումը հողօգտագործման փոփոխության միտումի հետևանքով և ջրի նկատմամբ զգայուն թիրախային օբյեկտները:

<u>Ներկայիս ԷՏԿՊ-ն հիմնված է 2023-2024 թթ. Իջևանի (AM0000005) երաշխավորված սահմանների և ԵՄ-ՀՇՄԾ-ի շրջանակներում տեսակների ու բնակավայրերի վերանայված ցանկի վրա:</u>

Ներկայիս ԷՏԿՊ-ն ցուցադրական օրինակ է ՀՀ-ի համար, հատկապես տարածքի պահպանման աստիճանի, պահպանման նպատակների և պահպանման միջոցների գնահատման մեթոդի տեսանկյունից: Տվյալ մեթոդը կիրառվում է Natura 2000 ԿՊ-ի մեջ, որը ընտրվել է ԵՄ-ի՝ ճնշման և պահպանման միջոցառումների ծածկագրերի ցանկերի վերջին հրապարակումից: Վերջինս ստանդարտների ցանկ է, որն օգտագործվում է Natura 2000-ի համար հոդված 17-ի տեսակների, բնակավայրերի և հոդված 12-ի թռչունների տեսակների նկատմամբ ճնշումների և սպառնալիքների մասին տեղեկություններ հաղորդելու համար: Սա մի մեթոդ է, որը կարող է առաջացնել նվազագույն անհամապատասխանություններ և նպաստել Հայաստանում ԷՏԿՊ -ների գնահատման միասնական ստանդարտացված եղանակին: Սա նաև կօգնի ավելի լավ զինելու Natura 2000-ին համապատասխանող մեթոդաբանություններով և ներուժ ապահովելու Հայաստանի փորձագետների և իրավասու մարմինների համար: Եվ սա առավելություն կլինի ապագա օգտագործման (օրինակ՝ «ԵՄ ԿՅԱՆՔ +» և այլ ծրագրեր) և Emerald բարոմետրի կառավարման ու մոնիթորինգի ապագա ցուցիչների համար:Բացի այդ, ԷՏԿՊ-ն տեղական մակարդակով ընդունված և պարզեցված է մի քանի կետերով՝ ըստ երկրում առկա տեղեկատվության ու կարողությունների: Այդ իսկ պատճառով ԿՊ-ն համապարփակ չէ: Այդուհանդերձ նպատակները հետևողականորեն պաշտպանվում են, և ԿՊ բոլոր անհրաժեշտ կետերը կատարվում են որոշակի մակարդակով՝ առաջնորդվելով ԿՊ-ի երաշխավորած ուղեցույցներով:

ԿՊ-ի առանցքային բաղադրիչները ներառում են պահպանվող օբյեկտների պահպանման աստիճանի և կարգավիճակի ներկայացումը: Հատուկ բնակավայրերի և տեսակների համար լրացուցիչ վերլուծվում են ճնշումները և սպառնալիքները և առաջարկվում են համապատասխան կառավարման միջոցառումներ: ԿՊ-ի հանձնարարականներն

առաջարկվում են Գործողությունների ծրագրով 10 տարվա ժամանակահատվածի համար (հավելված Բ)։ Գործողությունների ծրագիրը բովանդակում է նաև միջնաժամկետ գնահատման հաշվետվություն:Շրջակա միջավայրի նախարարությանը (ՇՄՆ) խորհուրդ է տրվում քննարկել ընթացիկ ԷՏԿՊ-ի վերանայման, լրամշակման և հաստատման հնարավորությունը, ինչպես նաև ներդնել և վերահսկել պահպանության միջոցառումների կատարումը ԿՊ-ի գործողության ողջ ընթացքում: Ամենակարևորը՝ ՀՀ կառավարությունը պետք է ապահովի անհրաժեշտ շրջանակն ու գործիքները իրականացնելու և գնահատելու համար առաջարկվող ներկա (և ապագա) գործողությունների ու մոնիթորինգի ծրագիրը: Այս նպատակով է նախատեսված «Էկոպարեկային ծառայության մասին» նոր օրենքը[4]: Երբ Էկոպարեկային ծառայությունը սկսի իր գործունեությունը խնդրո առարկա տարածքում, կարևոր է, որ տեղեկացվի ՇՄՆ-ի կողմից ԿՊ-ի ընդհանուր նպատակների, տարածքի կարևորության և պահպանման միջոցառումների մասին: Պետք է ուշադրություն դարձնել Գործողությունների ծրագրի հատուկ պահպանության կառավարման միջոցառումներին, ինչպիսին է անօրինական սպանությունների վերահսկումը/վերացումը:Բացի այդ, ինչպես քննարկվել է կարողությունների զարգացման 1-ին նիստում («Էմերալդ տարածքի պահպանման կառավարման և մոնիթորինգի ասպեկտների ներածություն», 2024 թ. փետրվարի 28), գոյություն չունի ստանդարտ շրջանակ, որին պետք է հետևել ԿՊ տնօրինության ողջ ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավվածության և ադապտացիոն կառավարման համար:

ԷՏԿՊ-ն և նկարագրված հանձնարարականները մշակել է տեղի և միջազգային փորձագետների թիմը՝ բնակավայրերի, բույսերի, թռչնաֆաունայի, սողունների, անողնաշարավորների և կաթնասունների վերաբերյալ:

Ստորև ներկայացված կենսաբազմազանության մասին տեղեկատվությունը հիմնականում վերլուծություն է՝ առանց տեղանքում հատուկ նմուշառման/մոնիթորինգի, այնուամենայնիվ ներառել է նաև նոր տվյալներ փորձագետների՝ տեղանքում կատարած անհատական հետազոտություններից (օրինակ՝ թռչնաֆաունայի համար):

Հարկ է նշել, որ կանոնավոր մոնիթորինգն անհրաժեշտություն է և նախատեսված է Գործողությունների ծրագրում: Դաշտային էմպիրիկ տվյալները և գիտական հետազոտությունները կօգնեն նաև բացահայտելու հնարավոր հակասական միջոցները (օրինակ՝ թիրախային թռչունների բնակավայրի գոտում գերարածեցումը վերահսկելը):Տարածքը բնութագրվում է պահպանման գերազանց աստիճանով՝ ցածր ճնշումներով և սպառնալիքներով բնակավայրի և թիրախային տեսակների ու բույսերի համար, ընդ որում, այնտեղ գրեթե ոչ մի գործունեություն չի ծավալվում, բացառությամբ չափավոր, բայց և աճող այնպիսի գործունեության, ինչպիսիք են անվերահսկելի անտառահատումը, անասնապահությունը և զբոսաշրջությունը: Ընթացիկ հետազոտությամբ նաև ուսումնասիրվում և գնահատվում են անտառտնտեսության (ԱՏ) ԿՊ-ի միջոցառումները և անհրաժեշտության դեպքում տրվում են առաջարկություններ: Պետք է նաև նկատի ունենալ, որ սա բարդ տարածք է ռելիեֆի և մատչելիության առումով, և բոլոր թիրախային տեսակների, օրինակ՝ թռչնաֆաունայի համակողմանի մոնիթորինգ դժվար է իրականացնել երկրում առկա տեխնիկական ռեսուրսներով: Այդ իսկ պատճառով առաջարկվող մոնիթորինգի պլանը

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186692

հատուկ որոշակի տեսակների մոնիթորինգի հնարավորություն է տալիս:Հաղորդակցության, կրթության ներդրման և իրազեկման բարձրացման ընթացքում 2024 թվականի մարտի կեսերին տեղի է ունեցել ուսուցողական/խորհրդատվական հանդիպում տեղական շահագրգիռ կողմերի հետ՝ հանրային լայն և բաց ներգրավվածության համար: Տեղական կարծիքներն ու տեսակետները հաշվի են առնվել ընթացիկ ԿՊ-ի վերանայման և վերջնական մշակման ընթացքում:

Ուսումնասիրության ծրագրի և կատարողների մանրամասները ներկայացված են ստորև:

## ԷՏԿՊ-ի կառուցվածքը և գործընթացը

Ներկայիս ԷՏԿՊ-ի կառուցվածքը հիմնվել է ԵՄ-ՀՇՄԾ-ի առաջարկությունների վրա՝ առանձին, ամբողջական, համապարփակ Էմերալդ ԿՊ-ի[5] պատրաստման և մշակման համար:

ԿՊ-ն բաղկացած է մի շարք հաջորդական փուլերից՝ ԿՊ նախնական պլանավորումից և նախապատրաստումից մինչև պահպանման միջոցառումների ավարտը, մշակումը, վերանայումը, իրականացումը և մոնիթորինգը ադապտացիոն կառավարման միջոցով (պատկեր 1): Բացի այդ, ինչպես առաջարկվում է Էմերալդ ԿՊ-ի պատրաստման ուղեցույցում, ոլորտի դաշտային ուսումնասիրությունը/գույքագրումը անհրաժեշտ է և պետք է միշտ լրացնի տեսակների տարածման մասին առկա տեղեկատվությունը:

Ստորև ներկայացված կենսաբազմազանության մասին տեղեկատվությունը հիմնականում ձեռք է բերվել գրասենյակային աշխատանքների շնորհիվ, տեղերում հատուկ նմուշառում/մոնիթորինգ չի իրականացվել, այդուհանդերձ բովանդակում է նաև նոր տվյալներ՝ հիմնված ոլորտի անհատական հետազոտությունների վրա (թռչնաֆաունայի համար):Ինչ վերաբերում է թռչնաֆաունային, ապա ներկայացված վերլուծությունը կատարել են Լյուբա Բալյանը և նրա թիմը, որոնք թռչունների հետազոտություններ են անցկացրել Հայաստանի հյուսիսային շրջաններում (ներառյալ Իջևանի շրջանը) էլեկտրահաղորդման գծի նախնական գնահատման նախագծի համար: Ընդ որում, այդ հետազոտությունները կատարվել են թե՛ բազմացման, թե՛ չբազմանալու ժամանակահատվածներում: Դաշտային զիտարշավներն իրականացվել են երեք տարի անընդմեջ 2021, 2022, 2023 թվականների ընթացքում. մայիսի վերջին, հունիսի կեսերին, սեպտեմբերի սկզբին՝ վերին բարձունքներում և ապրիլի ու հոկտեմբերի կեսերին՝ ցածրադիր բարձունքներում, քանի որ ավելի բարձրներն այդ ժամանակահատվածում նվազ մատչելի են անբարենպաստ եղանակի պատճառով: Ինչ վերաբերում է բույսերի բնակավայրերին և տեսակներին, որևէ նոր տվյալ չի զետեղվել ներկայիս ԿՊ-ում (2016 թ. ՍՏՁ –ից ի վեր), բացառությամբ թիրախային բույսերի առկայության մասին նախագծի զոտում, ինչպիսին է Echium russicum-ը:Տեղեկություններ են քաղվել նաև տարածքի ՍՏՁ-ի[6] (հավելված Գ) և շրջանում գործող երկու անտառտնտեսության ԿՊ-ների (Սևքար ԱՏ և Իջևան ԱՏ) և այլ փաստաթղթերից, օրինակ՝ արգելավայրերի հատակագծերից: Տեղեկատվությունը լրացվել է նաև այլ գիտական կազմակերպությունների (օրինակ՝ թռչնաբանական ընկերակցության) և տեղացիների հետ հաղորդակցման միջոցով (օրինակ՝ տեղական բնապահպանական տեսչություն, տեղական դիտորդների հաշվետվություններ և այլն): Ինչ վերաբերում է ՍՏՁ-ին, որոշ փոփոխություններ կան տեսակների/բնակավայրերի

---

[5] D2. Առաջարկություններ Հայաստանում Էմերալդ տարածքների կառավարման պլանների պատրաստման ուղեցույցների համար (2023 թ.), ԵՄ-ՀՇՄԾ:

[6] ՍՏՁ Իջևան, https://natura2000.eea.europa.eu/Emerald/SDF.aspx?site=AM0000005

ցանկերում՝ ըստ վերանայված հանձնարարականի (2023-2024 թթ. Եվրոպական միությունը հանուն շրջակա միջավայրի ծրագրի հանձնարարականներ): Հարկ է ընդգծել, որ կանոնավոր մոնիթորինգն անհրաժեշտություն է և նախատեսված է Գործողությունների ծրագրում:

Ներկայումս ԿՊ-ի մշակումը գիտական համայնքի պարտականությունն է ՇՄՆ -ի և ՀԲ-ի հսկողության ներքո: Քանի որ Իջևան Էմերալդ տարածքը համընկնում է Անտառային տնտեսության հետ, ՊՈԱԿ-ը (Իջևան և Սևքար ՊՈԱԿ) ընդգրկված է որպես հիմնական շահագրգիռ կողմ: Գործում է նաև «Էկոպարեկների մասին» նոր օրենքը[7], սակայն էկոպարեկների գործառույթները դեռևս ազդեցիկ չեն:

**Պատկեր 1. Ընթացիկ կառավարման պլանի մշակման գործընթացի փուլերը**




*Աղբյուր.* մշակված է KartEco-ի կողմից Համաշխարհային Բանկի համար

1. pre-planning phase - նախնական պլանավորման փուլ

2. preparatory phase - նախապատրաստական փուլ

3. stakeholder participatory approach - շահագրգիռ կողմերի համատեղ մոտեցում

4. situation analysis - իրավիճակի վերլուծություն

5. adaptive management plan - ադապտացիոն կառավարման պլան

6. monitoring - մոնիթորինգ

## Պահպանման պատմություն[8]

«Իջևան» Էմերալդ տարածքը (AM0000005) գտնվում է Հայաստանի հյուսիս-արևելքում՝ Տավուշի մարզում (պատկեր 2): Տարածքի մի մասը հյուսիսում ընդհանուր սահմաններ ունի AM0000030 «Ոսկեպարի» հետ, արևելքում՝ AM0000023 «Դեբեդի կիրճի» հետ և հարավում՝ «Դիլիջան» ազգային պարկի հետ (AM0000011 «Դիլիջան»): Էմերալդ տարածքը նախապես առաջարկվել է 2013 թվականին: Այն եղել է AM0000010 - «Դիլիջան ազգային պարկ, Իջևանի պետական արգելավայր» Էմերալդ տարածքի մաս 9641,05 հա տարածքով (տարածքի Իջևանի

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186692
[8] http://env.am/en/environment/sanctuaries

մասնաճյուղ), որը ընդգրկում էր Իջևանի ներկայիս՝ 2023-2024 թթ. Էմերալդ տարածքի մոտավորապես 20%-ը:

**Պատկեր 2. Հայաստանի Էմերալդ տարածքներ (առաջարկվել է 2023 թ., «Իջևան» Էմերալդ տարածքը (AM0000005) նշված է դեղին սլաքով)**




*Ծանոթագրություն.* Իջևան (AM0000005) Էմերալդ տարածք՝ մատնանշված է դեղին սլաքով:
*Աղբյուր.* մշակված է KartEco-ի կողմից Համաշխարհային Բանկի համար

Իջևանի տարածքի առաջին ամբողջական ներկայացումը Բեռնի կոնվենցիային եղել է 2016 թվականին, երբ տարածքն ընդլայնվել է և զբաղեցրել 47593.1 հա: Այն միավորել է նախկին 2 տարածք՝ «Իջևան» և «Լաստիվեր»: Իջևանի և Արջատխլենու պետական արգելավայրերում առկա են Կոնվենցիայի 6-րդ բանաձևում թվարկված 40 տեսակներ ազգային նշանակության բազմաթիվ այլ բուսական և կենդանական աշխարհի հետ միասին: Տարածքի 2016 թվականի տվյալներն ընդգրկված են ստանդարտ տվյալների ձևաթղթում՝ ՍՏՁ[9]-ում (հավելված Գ) համապատասխան շեյփֆայլով՝ տարածքի սահմաններով (պատկեր 3, քարտեզների ամբողջական փաթեթը զետեղված է հավելված Ա-ում):

2016 թվականից ի վեր, ըստ Էմերալդ բարոմետրի տվյալների[10], այս տարածքը (ինչպես ՀՀ-ի բոլոր Էմերալդ տարածքները) բնութագրվում է որպես «թեկնածու» տարածք, այսինքն՝ դեռ

---

[9] ՍՏՁ Իջևան, https://natura2000.eea.europa.eu/Emerald/SDF.aspx?site=AM0000005
[10] Էմերալդ բարոմետր, https://tableau-public.discomap.eea.europa.eu/views/EmeraldBarometerdashboard/Barometertable?%3AshowAppBanner=false&%3Adisplay_count=n&%3AshowVizHome=n&%3Aorigin=viz_share_link&%3AisGuestRedirectFromVizportal=y&%3Aembed=y

«ընդունված» չէ, ինչը նշանակում է, որ Էմերալդ ցանցի գործընթացում հարաբերական երկարաժամկետ դադար կա՝ առանց որևէ առաջխաղացման:

2023-2024 թթ. ԵՄ-ՀՇՄԾ-ի առաջարկությունների համաձայն՝ կատարվել են տարածքի փոքր ընդլայնում (+4%) և սահմանների օպտիմալացում (Էմերալդ տարածքի 75.6%-ը մնացել է նույնը): Ընդլայնման շարժառիթն այն էր, որ բացի անտառներից, ընդգրկվեն մարգագետինների բնակավայրեր: Այս ընդլայնումը կնպաստի ապագայում անտառների և արոտավայրերի ավելի ամբողջական և բազմաֆունկցիոնալ կառավարմանը: Ավելացվեցին նաև թռչունների նոր տեսակներ, այդ թվում՝ Aegypius monachus-ը՝ մշտական այցելու տարածքում, Aquila nipalensis-ը, Circus macrourus-ը և Falco naumanni-ը՝ մշտական գարնան/աշնան չու:

**Պատկեր 3. Իջևան Էմերալդ տարածքի (AM0000005) սահմանները (տվյալների ստանդարտ ձևից – ՏՏՁ, 2016)**




*Աղբյուր.* Տվյալների ստանդարտ ձև 2016.

Հիմնված վերոնշյալ տեղեկության վրա՝ Իջևան Էմերալդ տարածքի պահպանության ընդհանուր պատմությունը ամփոփ ներկայացված է ստորև՝ աղյուսակում:

**Աղյուսակ 1. Իջևան Էմերալդ տարածքի պահպանման պատմությունը 2011 թվականից**

| Տարի | Տարածք (հա) | Մեկնաբանություն |
|---|---|---|
| **2011** | - | - |
| **2013** | 9641 | AM0000010-ի մաս՝ «Դիլիջան» ազգային պարկ, Իջևանի պետական արգելավայր |
| **2016** | 47593 | |
| **2023** | 49499 | Տարածքի աճ +3,8% |
| | | 37446 հա-ը համընկնում է 2016 թվականի սահմանների հետ |

### Պահպանման և կառավարման ներկայիս կառուցվածքը

Ծրագրի տարածքում կիրառվող ընթացիկ կառուցվածքը ներկայացված է ստորև:

Էմերալդ տարածքի պահպանման միջոցառումները նշված են ՍՏՁ-ում (2016 թ.)

2016թ. ՍՏՁ -ն[11], որն ընդգրկում է ներկայիս Իջևան Էմերալդ տարածքի մեծ մասը, այսինքն՝ գրեթե 75.6%-ը, չունի պահպանության կառավարման գործունեության վերաբերյալ տեղեկատվություն և հանձնարարականներ: Բացի այդ, վերանայված առաջարկով (2023-2024 թթ.՝ համաձայն ԵՄ-ՀՇՄԾ-ի առաջարկությունների) տեսակների ցանկերում կան մի քանի փոփոխություններ:

Տարածքների պահպանությունը և կառավարումը՝ ՀՀ օրենսդրության համաձայն (օրինակ՝ որոշված պահպանվող տարածքները և ԱՏ -ները)

Ուսումնասիրվող տարածքի մի մասը (պատկեր 4) համընկնում է երկու անտառային տնտեսության՝ Սևքարի ԱՏ -ի և Իջևանի ԱՏ -ի և երկու արգելավայրերի՝ «Արջատխլենի» և «Իջևան» պետական արգելավայրերի հետ: Ծրագրի տարածքի ընդհանուր համընկնման մասնաբաժինը նշանակված պահպանվող տարածքների, ԱՏ-ների հետ հասնում է ընդհանուր 62.2%-ի (աղյուսակ 2), մնացածը (37.8%) համայնքային չպահպանվող խոտային համակեցություններ են (սպիտակ տարածքները քարտեզի վրա, պատկեր 4):

**Աղյուսակ 2. Պահպանության ; կառավարման սխեմայի համամասնությունը ծրագրի տարածքում (հա)**

| Էմերալդ տարածքի պահպանման և կառավարման շրջանակ | | տարածք (հա) | % տարածք |
|---|---|---|---|
| **ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահպանվող տարածքներ** | Արգելավայրեր | 6110 | 12.3 |
| | Այլ, ինչպիսիք են պետական արգելոցները, ազգային պարկերը | 0 | 0 |
| **Անտառային տնտեսություն** | | 29555 | 62.18 |
| **Ընդհանուր Էմերալդ տարածքի համընկնումը նշանակված պահպանվող տարածքների և ԱՏ-ի հետ** | | 30778,47 | 62.18 |
| **Համայնքային հողեր** | | 18720,53 | 37.82 |
| **Իջևան Էմերալդ տարածք -AM0000005 (2023-2024)** | | 49499 | 100 |

Արգելավայրեր

Արջատխլենու և Իջևանի պետական արգելավայրերը գտնվում են Իջևան Էմերալդ տարածքում: Երկուսն էլ ամբողջությամբ (100%) գտնվում են Իջևան Էմերալդ տարածքում (պատկեր 4): Երկու արգելավայրերը միասին զբաղեցնում են Իջևան Էմերալդ տարածքի մոտ 12.3%-ը: Արջատխլենու արգելավայրը ստեղծվել է 1958 թվականին[12] արջատխլենու և եղնիների պուրակները պահպանելու նպատակով: Իջևանի պետական արգելավայրը ստեղծվել է 1971 թվականին[13] անտառային լանդշաֆտների և կենդանիների որոշ տեսակների

---

[11] ՍՏՁ Իջևան, https://natura2000.eea.europa.eu/Emerald/SDF.aspx?site=AM0000005

[12] ՀԽՍՀ Նախարարների խորհրդի N Պ-341 հրաման:

[13] ՀԽՍՀ Նախարարների խորհրդի N 212 հրահանգ:

(ընկույզ, արջ, փասիան) պահպանության նպատակով: Մինչ այժմ ծրագրի տարածքում բնապահպանական այլ հատուկ միջոցներ չեն կիրառվել: Արգելավայրերի կառավարման կազմակերպությունը «Հայանտառ» ՊՈԱԿ-ն էր: Ներկայումս կառավարման մարմնի փոփոխություն չկա, թեև բարեփոխումներ են տեղի ունենում:

**Պատկեր 4. Քարտեզ, որը պատկերում է ծրագրի տարածքում նշանակված պահպանվող տարածքները ։ ԱՏ-ները: (Սպիտակ տարածքները համայնքի չպահպանվող խոտային համակեցություններ են Էմերալդ տարածքում)**




<u>Ծրագրի տարածքի շրջակայքում գտնվող այլ պահպանվող տարածքներ</u>

Իջևան Էմերալդ տարածքի ներսում և շրջակայքում միջազգային պայմանագրերով երեք պահպանվող տարածքներ կան (սակայն ՀՀ օրենսդրությամբ չամրագրված), օրինակ՝ մեկ ԿԹՏ՝ կարևոր թռչնաբանական տարածք, մեկ ԿՀՏ՝ կենսաբազմազանության հատուկ տարածք և մեկ ԿԲՏ՝ կարևոր բույսերի տարածք (աղյուսակ 3):

**Աղյուսակ 3. Այլ տեսակի պահպանվող տարածքներ (Հայաստանում պետականորեն չպահպանված) Իջևան Էմերալդ տարածքի շրջակայքում**

| Պահպանվող տարածքների այլ տեսակներ (Հայաստանում պետականորեն պահպանված չեն) | Անվանում | Լիովին/մասնակի համընկնում Իջևան Էմերալդ տարածքի հետ |
|---|---|---|
| **ԿԲՏ՝ Կարևոր բույսերի տարածքներ** | Իջևանի արջատխլենու պուրակ | ԿԲՏ-ն լիովին համընկնում է «Արջատխլենի» արգելավայրի հետ: (https://www.plantlifeipa.org/site/factsheet/1967) |
| **ԿՀՏ՝ Կենսաբազմազանության հիմնական տարածքներ** | Դսեղ - Հաղարծին - Փամբակ շղթա և «Դիլիջան» ազգային պարկ | Մասնակի համընկնում (https://www.keybiodiversityareas.org/site/factsheet/26263) |

| ԿԹՏ՝ Կարևոր թռչնաբանական տարածքներ | Հաղարծին | Մասնակի համընկնում (https://datazone.birdlife.org/site/factsheet/haghartsin-iba-armenia) |
|---|---|---|

Վերջապես, ստորև բերված աղյուսակում (աղյուսակ 4) ներկայացված են նախագծային գոտուն մոտ գտնվող պահպանվող տարածքները՝ որոշված ըստ ՀՀ օրենսդրության և ԱՏ-ների: Այն փաստը, որ տարածքին կից կա յոթ տարածք, որոնք գտնվում են պահպանության և կառավարման սխեմայի ներքո, և կան մի շարք «այլ պահպանվող տարածքներ», ցույց է տալիս տարածքի և շրջակայքի կարևորությունը: Սա նաև կարելի է լրացուցիչ ուսումնասիրել ապագայում, օրինակ՝ որպես հավանական էկոմիջանցք կամ միացում Էմերալդին:

**Աղյուսակ 4. Պահպանման հատուկ կարգավիճակ ունեցող տարածքներ Իջևան Էմերալդ տարածքի շրջակայքում**

| Պահպանության հատուկ կարգավիճակ ունեցող տարածքներ | Անվանում | Հեռավորությունը Իջևան Էմերալդ տարածքից |
|---|---|---|
| Նշանակված պահպանվող տարածքներ | «Արջատխլենի» արգելավայր | 100% Իջևան Էմերալդ տարածքի ներսում |
| | Իջևանի պետական արգելավայր | 100% Իջևան Էմերալդ տարածքի ներսում |
| | «Դիլիջան» արգելավայր/ Ազգային պարկ | Իջևան Էմերալդ տարածքի հարավային սահմանին հարող |
| | Գանձաքար՝ վերին արգելավայր | Իջևան Էմերալդ տարածքի հարավարևելյան սահմանին հարող |
| Այլ Էմերալդ տարածքներ | Ոսկեպար - AM0000030 | Իջևան Էմերալդ տարածքի հյուսիսարևմտյան սահմանին հարող |
| | Դեբեդ - AM0000023 | Իջևան Էմերալդ տարածքի հարավարևմտյան սահմանին հարող |
| | Դիլիջան - AM0000011 | Իջևան Էմերալդ տարածքի հարավային սահմանին հարող |
| Անտառային տնտեսություն | Սևքար | Իջևան Էմերալդ տարածքի 42.43%-ը գտնվում է Սևքարի ԱՏ-ում |
| | Իջևան | Իջևան Էմերալդ տարածքի 19.75%-ը գտնվում է Իջևանի ԱՏ-ում |
| | Դսեղ | Իջևան Էմերալդ տարածքի հարավարևմտյան սահմանին հարող |
| | Նոյեմբերյան | Իջևան Էմերալդ տարածքի հյուսիսարևմտյան սահմանին հարող |

<u>Անտառային տնտեսության (ԱՏ) կառավարման շրջանակ</u>

Ծրագրի տարածքի մի մասը պատկանում է երկու տարբեր անտառային տնտեսության (ԱՏ)՝ Սևքարի ԱՏ-ին, որն ընդգրկում է Էմերալդ տարածքի 42.43%-ը, և Իջևանի ԱՏ-ին, որը զբաղեցնում է Էմերալդ տարածքի 19.75%-ը, ընդհանուր 62.18%:

Սևքարի անտառների կառավարման վերջին պլանը (ԱԿՊ) կազմվել է 2021 թվականին և գործում է մինչև 2030 թվականը, Իջևանի անտառների կառավարման վերջին պլանը պատրաստվել է 2021 թվականին և գործում է մինչև 2030 թվականը:

Այս երկու ԿՊ-ներն օգտագործվել են որպես տվյալների և տեղեկատվության աղբյուր ընթացիկ ուսումնասիրության մեջ: Տրվում է ԿՊ միջոցառումների համառոտ նկարագրությունը, գնահատվում է, թե որքանով են դրանք համահունչ առաջարկվող Էմերալդի պահպանման նպատակներին, և առաջարկվում են մի շարք շտկող միջոցառումներ, որոնք պետք է քննարկել:

# ԷՄԵՐԱԼԴ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## Էմերալդ տարածք

Իջևան Էմերալդ տարածքն ամբողջությամբ գտնվում է Տավուշի մարզում, որը Հայաստանի ամենահյուսիսարևելյան մարզն է: Մոտակա քաղաքներն են Իջևանը՝ 21081 բնակչությամբ, որը գտնվում է Էմերալդ տարածքի արևելյան սահմանին (քաղաքի սահմանները Իջևան Էմերալդ տարածքի սահմաններն են), և Դիլիջանը՝ 17712 բնակչությամբ, մոտ 10 կմ հարավ Էմերալդ տարածքից: Տարածքը գտնվում է Երևանից մոտավորապես 150 կմ հեռավորության վրա:

Էմերալդ տարածքին մոտ կան մի շարք բնակավայրեր (պատկեր 5), ինչպիսիք են Հովքը՝ հարավում, Աhնիձորը, Աթանն ու Պաղակնը՝ արևմուտքում, Ոսկեպարը, Կիրանցը, Աճարկուտը, Ծաղկավանը և Սևքարը՝ հյուսիսում, Աչաջուրը, Լուսաձորը, Ենոքավանը, Գետահովիտը, Իջևանը, Գանձաքարը՝ արևելքում:

**Պատկեր 5. Իջյան Էմերալդ տարածքին հարող վարչական բաժանումներ ։ համայնքներ**




Հյուսիսում, արևելքում և հարավ-արևելքում տարածքը սահմանակից է Իջևանի և Սևքարի անտառային տնտեսություններին: Հարավարևելյան սահմանները համընկնում են ազգային ճանապարհային ցանցին և Աղստև գետի հունին: Հարավում և հարավարևմտյան մասում սահմաններն անցնում են Դիմաց լեռան գագաթով: Վերջապես տարածքի արևմտյան հատվածի սահմանը համընկնում է Տավուշի մարզի և Թումանյանի վարչական շրջանի սահմանագծին:

**Աղյուսակ 5. Իջևան Էմերալդ տարածքի (AM0000005) տվյալներ**

| Աշխարհագրական դիրքը | | |
|---|---|---|
| Կենտրոնի կոորդինատներ (մետր) | X | 500799 |
| | Y | 4529630 |
| Պարագիծ (մետր) | 280,705.10 | |
| Մակերես (հա) | 49,499.42 | |
| Վարչական պատկանելություն | | |
| Մարզ | Տավուշ (100%) | |
| Մարզային միավոր | Իջևան (100%) | |

## Հողի օգտագործումը, ներառյալ՝ ներկա կարգավիճակն ու սեփականությունը, և պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոնները (աբիոտիկ, կենսաբանական, մարդկային գործունեություն)

### Հողօգտագործում և պահպանվող օբյեկտ(ներ)ի վրա ազդող գործոններ (աբիոտիկ, կենսաբանական, մարդկային գործունեություն)

Ծրագրի տարածքի հողօգտագործման երկու հիմնական կատեգորիաները, որոնք կազմում են ավելի քան 99%-ը, հետևյալն են.

- Ծառածածկ/անտառային տարածքներ, որոնք ծրագրի տարածքում հողօգտագործման հիմնական ծածկույթն են (62.2%), ամբողջությամբ բաշխված երկու անտառային տնտեսությունների՝ Սևքարի և Իջևանի ԱՏ-ների միջև:
- Մարզագետիններ (37.8%), որոնք ամբողջությամբ կազմված են տարածքի համայնքային հողերից և օգտագործվում են հիմնականում որպես արոտավայրեր և խոտհարքներ:

**Աղյուսակ 6. Յողօգտագործումը Իջևան Էմերալդ տարածքում (AM0000005)[14]**

| Հողի տեսակը | Տարածք (հա) | Տարածքի տոկոս |
|---|---|---|
| **Ծառածածկ/անտառային տարածքներ** | 29,555 | 59.7% |
| **Խոտաբուսային համակեցություններ** | 19,907 | 40.2% |
| **Վարած տարածքներ** | 31 | <0.1% |
| **Կառուցապատված** | 5 | <0.1% |
| **Մերկ/ նոսր բուսականություն/ թփուտներ** | 1 | <0.1% |
| **Մշտական ջրամբարներ** | 0.42 | <0.1% |
| **Տարածքի ընդհանուր մակերեսը** | 49,499.42 | 100% |

Չկան խոշոր վարելահողեր: Բոլոր փոքր, մշակովի հողատարածքները մասնատված են և բաշխված հիմնականում գյուղական բնակելի տների մոտ: Կառուցապատված տարածքը հիմնականում գտնվում է Ենոքավան բնակավայրի շրջակայքում՝ Էմերալդ տարածքի արևելյան սահմանին: Էմերալդ տարածքում չկան բնակավայրեր և գրեթե չկան շենքեր կամ այլ մշտական շինություններ: Բացի այդ, չկան այլ նշանակալից գործառնություններ, օրինակ՝ արդյունաբերական կամ այլ համապատասխան գործառնություններ:

[14] Հողօգտագործման ֆայլի տվյալների աղբյուր՝ ESA WorldCover նախագիծ (2021)/ Պարունակում է փոփոխված Copernicus Sentinel տվյալները՝ մշակված ESA WorldCover կոնսորցիումի կողմից:

Ծրագրի տարածքի հողատարածքների լուսանկարները, օրինակ՝ խոտածածկ տարածքները, խառը խոտածածկ տարածքներ/անտառները և անտառային/ափամերձ գոտիները կարելի է տեսնել 6, 7 և 8 պատկերներում:

**Պատկեր 6. Իջյան Էմերալդ տարածքի խոտային համակեցությունների տեսքը (լուսանկարը՝ Շանթ Խաչերյանի, Google Maps)**



*Աղբյուր*՝ Շանթ Խաչերյան, Google Maps

**Պատկեր 7. Հողածածկույթի փոփոխության տեսքը՝ խոտային համակեցություններից անտառ (լուսանկարը՝ Շանթ Խաչերյանի, Google Maps)**



*Աղբյուր*՝ Շանթ Խաչերյան, Google Maps

### Պատկեր 8. Աղստյ գետի ափամերձ միջավայրի տեսքը անտառապատ լեզվակներով (լուսանկարը՝ Շանթ Խաչերյանի, Google Maps)



*Աղբյուր*՝ Շանթ Խաչերյան, Google Maps

Էմերալդ տարածքի անտառային ծառերի ծածկույթի տիպի քարտեզը ներկայացված է ստորև (պատկեր 9)։ Ծածկույթի գերակշռող տեսակը հաճարենին է։

### Պատկեր 9. Իջևան Էմերալդ տարածքի ծառերի ծածկույթը - AM0000005




Աղբյուրը՝ ՇՄՆ -ի տրամադրած տվյալներ։

Ծրագրի տարածքի հարավ-արևմուտքում գտնվող բարձունքը հիմնականում բաղկացած է անմշակ հողատարածքներից և մարգագետիններից, որոնք հիմնականում պատկանում են պետությանը և օգտագործվում են որպես արոտավայրեր և խոտհարքներ:

Ինչ վերաբերում է ծրագրի գոտում գտնվող կոմունալ ծառայություններին, ապա հիմնական ճանապարհային ցանցը «Մ-4»-ն է՝ համապետական նշանակությամբ, որ կապում է Իջևանն ու Երևանը և անցնում է Էմերալդ տարածքի հարավարևելյան անկյունով: Տեղանքով է անցնում նաև երկրորդական ճանապարհային ցանցը՝ տեղական նշանակության «Հ-26»-ը :

«ՀԱՅԱՆՏԱՌ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ) Էմերալդ տարածքի մոտակա (ներսում կամ մերձակայքում) օբյեկտներով զբաղվում է փայտանյութի հավաքմամբ, վերամշակմամբ և իրացմամբ : Կազմակերպությունն իրականացնում է անտառապատում և անտառավերականգնում:

## Պահպանված օբյեկտ(ներ) (բանաձև 4 և 6)

Այս բաժնում ներկայացվում են ծրագրային տարածքի բոլոր հիմնական տարրերը, որոնք անհրաժեշտ են տեսակների և բնակավայրերի պահպանության համար, թվարկված են 4-րդ (1996) և 6-րդ (1998) բանաձևերում և առկա են խնդրո առարկա տարածքում:

Պահպանման աստիճանի հաշվարկման մեթոդը՝ ըստ թիրախային բնակավայրի տիպի և տեսակների

Հիմք ընդունելով Natura 2000 տարածքի կառավարման համար ԵՄ-ում կիրառվող միջազգային գործելակերպը՝ մշակվել և կիրառվել է պահպանման աստիճանի մեթոդաբանություն՝ ելնելով ուսումնասիրության կարիքներից և երկրի փորձագետների կարողություններից: Պահպանման աստիճանը հաշվարկված է Էվանսի և Արվելայի առաջարկած մեթոդաբանությունը (2011)[15] և ՍՏՁ-ները լրացնելու համար օգտագործված բացատրական նշումները (Եվրոպական հանձնաժողով 2011)[16] համատեղելու եղանակով: Մեթոդաբանության համառոտ նկարագրությունը ներկայացված է ստորև: Այն հանգամանորեն ներկայացվել է ԵՄ-ՀՇՄԾ-ի շրջանակներում կազմակերպված կարողությունների զարգացման սեմինարում:

Քայլ 1

Վերլուծությունը սկսվում է գնահատելով (A, B և C արժեքներով) պահպանման յոթ կարևոր չափորոշիչները յուրաքանչյուր հատկանիշի համար, օրինակ՝ կառուցվածքը և գործառույթները (1), բնորոշ տեսակները (2), տարածքի ծածկույթը (3), ճնշումները և սպառնալիքները (4), դրական ազդեցությունները (5), ապագա միտումը (6 = 4+5) և ապագա կարգավիճակը (7 = 1):

---

[15] Էվանս Դ. և Արվելա Մ. 2011. Գնահատում և հաշվետվություն Բնակավայրերի մասին հրահանգի 17-րդ հոդվածի համաձայն - Բացատրական նշումներ և ուղեցույցներ 2007-2012 թթ. համար - Վերջնական նախագիծ (2011). Կենսաբազմազանության եվրոպական թեմատիկ կենտրոն, 1-123:

[16] Եվրոպական հանձնաժողով. 2011. NATURA 2000 Ստանդարտացված տվյալների ձևաթուղթ Բացատրական ծանոթագրություններ, https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2011:198:0039:0070:EN:PDF

| Կառուցվածք և գործառույթներ (1) | բնորոշ տեսակներ (2[17]) | տարածքի ծածկույթ (3[18]) | ճնշումներ (P) և սպառնալիքներ (T) (4[19]) | դրական ազդեցություններ (5) | ապագա միտում (6 = 4+5) | ապագա կարգավիճակ (7 = 1) |
|---|---|---|---|---|---|---|

Ինչպես արդեն նշվեց, պահպանման հնարավոր չափանիշների արժեքները հետևյալն են.

**A** - Գերազանց (A)

**B** - Լավ (B)

**C** - Չափավոր կամ սահմանափակ (C)

<u>Քայլ 2</u>

Հիմնվելով արժեքների վրա, այսինքն՝ A, B և C-ի՝ վերագրված 1-ին քայլում ութ չափանիշներից յուրաքանչյուրին, երեք համակցված արդյունքները կամ խմբերը, (A խումբ / կառուցվածքների և գործառույթների վերջնական գնահատում, B խումբ / պահպանման հեռանկարներ և C խումբ /վերականգնման հնարավորությունը) նույնպես հաշվարկվում են հետևյալ հարաբերակցությամբ.

| Կառուցվածք և գործառույթներ (1) | բնորոշ տեսակներ (2[20]) | կառուցվածքների և գործառույթների վերջնական գնահատում (A խումբ = 1+2) | տարածքի ծածկույթ (3[21]) | ճնշումներ (P) և սպառնալիքներ (T) (4[22]) | դրական ազդեցություններ (5) | ապագա միտում (6 = 4+5) | ապագա կարգավիճակ (7 = 1) | պահպանման հեռանկարներ (Խումբ B = 3+6+7) | Վերականգնման հնարավորություն (Խումբ C[23]) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|

Խմբի հնարավոր արժեքները հետևյալն են.

**A**- Գերազանց (A)

**B** - Լավ (B)

**C** - Չափավոր կամ սահմանափակ (C)

<u>Քայլ 3 –Յուրաքանչյուր թիրախային հատկանիշի (տեսակների և/կամ բնակավայրերի) վերջնական գնահատում</u>

**Ելնելով 2-րդ քայլում հաշվարկված A, B և C խմբերի արժեքներից**՝ վերջապես հաշվարկվում է բնակավայրի տիպի կամ տեսակի պահպանման վերջնական և ընդհանուր աստիճանը, այսինքն՝ «Պահպանության աստիճանը (խումբ A, B, C)»:

| Կառուցվածք և գործառույթներ (1) | բնորոշ տեսակներ (2[24]) | կառուցվածքների և գործառույթների վերջնակա | տարածքի ծածկույթ (3[25]) | ճնշումներ (P) և սպառնա | դրական ազդեցություններ (5) | ապագա միտում | ապագա կարգավիճակ (7 = 1) | պահպանման հեռանկարներ | Վերականգնման հնարավոր | Պահպանման աստիճան (A, |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|

[17] Բնակավայրի տիպի բնորոշ տեսակների գերակշռության գնահատում:
[18] Գնահատել՝ արդյոք հսկող արժեքները (բաշխման տարածքի) բավարար են:
[19] A. ոչ բարձր կարևորության P կամ T և մինչև 1 միջին կարևորության, B. մինչև 3 P կամ T միջին կարևորության, C. առնվազն 1 T կամ P բարձր կարևորության և/կամ ավելի քան 3 P կամ T միջին նշանակության:
[20] Բնակավայրի տիպի բնորոշ տեսակների գերակշռության գնահատում:
[21] Գնահատել՝ արդյոք հսկման արժեքները (բաշխման տարածքի) բավարար են:
[22] A. ոչ բարձր կարևորության P կամ T և մինչև 1 միջին կարևորության, B. մինչև 3 P կամ T միջին կարևորության, C. առնվազն 1 T կամ P բարձր կարևորության և/կամ ավելի քան 3 P կամ T միջին նշանակության:
[23] A= հեշտ, B= հնարավոր է միջին ջանքերով, C= դժվար կամ անհնար:
[24] Բնակավայրի տիպի բնորոշ տեսակների գերակշռության գնահատում
[25] Գնահատել՝ արդյոք հսկման արժեքները (բաշխման տարածքի) բավարար են:

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ն գնահատում (A խումբ = 1+2) | | լիքներ (T) (4[26]) | | (6 = 4+5) | | (Խումբ B = 3+6+7) | ություն (Խումբ C[27]) | B, C խումբ[28]) |

Պահպանության ընդհանուր աստիճանը (ըստ թիրախային տեսակների և/կամ բնակավայրերի), այսինքն՝ «Պահպանության աստիճանը (A, B, C)» կարող է ունենալ հետևյալ արժեքները.

| Պահպանման աստիճան = A (գերազանց պահպանում) | Պահպանման աստիճան = B (լավ պահպանում) | Պահպանման աստիճան = C (չափավոր կամ սահմանափակ պահպանում) |
|---|---|---|
| Եթե մասնաբաժինը հավասար է 75%-ի կամ ավելի բարձր է, տարածքն ունի գերազանց պահպանման կարգավիճակ: | Եթե պահպանման գերազանց աստիճան ունեցողի մասնաբաժինը 75%-ից պակաս է, իսկ միջին պահպանման աստիճանի տոկոսը 25%-ից պակաս է: | Եթե մասնաբաժինը հավասար է 25%-ի կամ ավելի բարձր է, պահպանման միջին աստիճան ունի: |

Ավելացված է համակցված/նոր կատեգորիան՝

| Պահպանման աստիճան = A/B |
|---|
| Եթե պահպանման աստիճանը փորձագիտական գնահատականի արդյունք է և հետագա գնահատման կարիք ունի դաշտային տվյալների օգտագործմամբ: |

Հաշվարկի օրինակը հետևյալն է (Խումբ A=A, Խումբ B=B, Խումբ C=A, հետևաբար պահպանման աստիճան=A).

| Բնակավայրի տեսակ ԿԱՄ կենդանական աշխարհի տեսակներ | Կառուցվածք և գործառույթներ (1) | բնորոշ տեսակներ (2[29]) | կառուցվածքների և գործառույթների վերջնական գնահատում (A խումբ = 1+2) | տարածքի ծածկույթ (3[30]) | ճնշումներ (P) և սպառնալիքներ (T) (4[31]) | դրական ազդեցություններ (5) | ապագա միտում (6 = 4+5) | ապագա կարգավիճակ (7 = 1) | պահպանման հեռանկարներ (Խումբ B = 3+6+7) | Վերականգնման հնարավորություն (Խումբ C[32]) | Պահպանման աստիճան (A, B, C խումբ[33]) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **XXXXX** | **A** | **-** | **A** | **A** | **B** | **-** | **B** | **B** | **B** | **A** | **A** |

[26] A. ոչ բարձր կարևորության P կամ T և մինչև 1 միջին կարևորության, B. մինչև 3 P կամ T միջին կարևորության, C. առնվազն 1 T կամ P բարձր կարևորության և/կամ ավելի քան 3 P կամ T միջին նշանակության:
[27] A= հեշտ, B= հնարավոր է միջին ջանքերով, C= դժվար կամ անհնար:
[28] Պահպանման աստիճան = A (գերազանց), B (լավ), C (չափավոր կամ սահմանափակ, A/B (Պահպանման աստիճանը փորձագետի դիտարկման արդյունք է, անհրաժեշտ է գնահատել ոլորտի տվյալներով):
[29] Բնակավայրի տիպի բնորոշ տեսակների գերակշռության գնահատում:
[30] Գնահատել՝ արդյոք հսկման արժեքները (բաշխման տարածքի) բավարար են:
[31] A. ոչ բարձր կարևորության P կամ T և մինչև 1 միջին կարևորության, B. մինչև 3 P կամ T միջին կարևորության, C. առնվազն 1 T կամ P բարձր կարևորության և/կամ ավելի քան 3 P կամ T միջին նշանակության:
[32] A= հեշտ, B= հնարավոր է միջին ջանքերով, C= դժվար կամ անհնարին:
[33] Պահպանման աստիճան = A (գերազանց), B (լավ), C (չափավոր կամ սահմանափակ, A/B (պահպանման աստիճանը փորձագետի դիտարկման արդյունք է, անհրաժեշտ է գնահատել ոլորտի տվյալներով):

Վերոնշյալ մեթոդի նպատակն է հաշվարկել փորձնական տարածքների պահպանության աստիճանը յուրաքանչյուր նմուշառման հատվածում և բնակավայրի տիպի կամ տեսակների պահպանության աստիճանը՝ յուրաքանչյուր նմուշառման հատվածում փորձարկումների ընտրության ժամանակ:

Հարկ է ընդգծել, որ ծրագրի տարածքում համակարգված նմուշառում չի իրականացվել ըստ բնակավայրերի տիպի և տեսակների, այդ իսկ պատճառով պահպանման աստիճանի հաշվարկն արվել է փորձագետների կողմից մատենագիտական տվյալների և դիտարկումների հիման վրա: Բնակավայրերի քարտեզագրումը կատարվել է բացառապես փորձագետների գնահատականների և արբանյակային քարտեզագրման հիման վրա և առանց ոլորտի դիտարկումների:

Երբ բնակավայրի վերջնական տիպերի կամ տեսակների պահպանման աստիճանը հավասար է A/B, B կամ C-ի, ապա ճնշումները և սպառնալիքները պետք է հետագայում վերլուծվեն, և պետք է առաջարկվեն կառավարման միջոցառումներ տվյալ բնակավայրերի/տեսակների համար:

### Բնակավայրի տեսակները

Բանաձև 4-ում թվարկված է քսանյոթ է (27) բնակավայր, և դրանց պահպանման աստիճանը հաշվարկված և ներկայացված է ստորև (աղյուսակ 7): Ըստ վերլուծության՝ 27-ից 6-ը բնութագրվում են որպես «A»՝ գերազանց պահպանում, 1-ը՝ «B»՝ լավ պահպանում և մեծամասնությունը՝ 20-ը՝ որպես A/B (աղյուսակ 8):

| *Neophron percnopterus* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց[92] | M | Պոպուլյացիայի պահպանում- Սահմանափակել հանգստի կազմակերպումը բնադրման վայրերի մոտ | 2-4 զույգ |

[92] Ապօրինի որսը/սպանությունը տարածված սպառնալիք չէ անգղերի համար Իջևանում կամ դրանից դուրս, դա պաշտոնապես հաստատում է տեղական բնապահպանական տեսչությունը, ինչպես նաև հայտնում են տեղի՝ Իջևանի խնամակալները և համեմատում տվյալները թռչնաբանական համայնքի անդամների հետ:

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Pernis apivorus* | PG11 Ապօրինի որս/սպանությու ն | M | Պոպուլյացիայի պահպանում – Վերահսկել և կանխել անօրինական որսը/սպանությունը | Անհայտ – ՄՏՁ-ում տեղեկություններ չկան |

Ըստ վերը բերված աղյուսակի արդյունքների՝ պահպանման նպատակներն են՝ ա) պահպանել թիրախային տեսակների պոպուլյացիան և (բ) բարելավել նրանց բնակավայրի ընդհանուր պահպանման աստիճանը: Թռչունների համար հիմնական վտանգը նրանց բնակավայրերի կորուստն ու տարանջատումն է ինտենսիվ անտառահատումների հետևանքով՝ թե՛ անօրինական (առևտրային շահույթի համար), թե՛ օրինական (սահմանվում են որպես «սանիտարական հատումներ»): Տարեց ծառերի հեռացումը, հատկապես գարնանը և ամռանը, խոչընդոտում է խոշոր գիշատիչների (օրինակ՝ փոքր բծավոր արծվի՝ Aquila pomarina) և միջամտությունների նկատմամբ զգայուն այլ խոշոր տեսակների բազմացումը: Մեռած փչակավոր ծառերի հեռացումը նույնպես վատթարացնում է անտառի ընդհանուր վիճակը և, հետևաբար, սահմանափակում անտառային հազվագյուտ և հատուկ տեսակների բնադրման և կեր հայթայթելու հնարավորությունները, ինչպիսիք են փայտփորիկները, ճանճորսիչները, բվերը: Չվող և ձմեռող խոշոր գիշատիչ թռչունների ապօրինի որսը, հատկապես անօրինական առևտրի համար, ևս մեկ գերակշռող սպառնալիք է: Մարդկանց պատճառած անհանգստությունը, չկարգավորվող արշավային զբոսաշրջությունը և ժայռամագլցումը արդեն բացասաբար են ազդել տվյալ վայրում անգղների հաջող բնադրման վրա:

<u>Կաթնասուններ</u>

Հաշվի առնելով թիրախային կաթնասունների պահպանման աստիճանի գնահատման արդյունքները՝ աղյուսակներ 17-ում և 18-ում, ճնշումները և սպառնալիքները և համապատասխան կառավարման միջոցառումները վերլուծվում են ստորև:

Պահպանման նպատակներն ու ճնշումները գնահատելու համար օգտագործված կենսաբազմազանության մասին տեղեկությունները հավաքել և տրամադրել է Աստղիկ Ղազարյանը: Այս տարածքում երբևէ կանոնավոր մոնիթորինգ չի արվել: Տրամադրված բոլոր տվյալները հավաքել են փորձագետները հետազոտության ընթացքում:

### Աղյուսակ 23. Ճնշումները ֊ սպառնալիքները թիրախային կաթնասուններին

| Տեսակներ | Ճնշումները և սպառնալիքները[93] | կարևորություն[94] | պահպանման նպատակ | պահպանման օբյեկտ[95] |
|---|---|---|---|---|
| *Canis lupus* | PJ12 Կլիմայի փոփոխության պատճառով հարակից տեսակների (օրինակ՝ սննդի աղբյուր/որս, գիշատիչ/մակաբույծ, սիմբիոտ և այլն) նվազում կամ անհետացում | M | պոպուլյացիայի պահպանում | >20 |
| | PJ13 Տեսակների տարածման փոփոխություն (բնական նորեկներ) կլիմայի փոփոխության պատճառով | M | պոպուլյացիայի պահպանում | |
| *Lutra lutra* | PG11 Ապօրինի որս/սպանություն | M | պոպուլյացիայի պահպանում | >20 |
| | PL05 - Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | M | տարածքի պահպանում | >100 հա |
| *Lynx lynx*[96] | PJ12 Կլիմայի փոփոխության պատճառով հարակից տեսակների (օրինակ՝ սննդի աղբյուր/որս, գիշատիչ/մակաբույծ, սիմբիոտ և այլն) նվազում կամ անհետացում | M | պոպուլյացիայի պահպանում | >20 |
| | PJ13 Տեսակների տարածման փոփոխություն (բնական նորեկներ) կլիմայի փոփոխության պատճառով | M | պոպուլյացիայի պահպանում | |
| *Myotis blythii* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | M | պոպուլյացիայի պահպանում-քարանձավների այցելուների թվաքանակի վերահսկում և սահմանափակում | >30 |
| *Myotis bechsteini* | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | M | պոպուլյացիայի պահպանում - սանիտարական հատումների ժամանակ գերաճած և քայքայված ծառերի մի մասի պահպանում | >30 |
| *Miniopterus schreibersii* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | M | պոպուլյացիայի պահպանում-քարանձավների այցելուների թվաքանակի վերահսկում և | >30 |

[93] https://www.eea.europa.eu/en
[94] L = ցածր, M = միջին, H = բարձր նշանակություն:
[95] Արժեքները նշանակվել են ՍՏՁ-ի հիման վրա: Նշենք, որ ներկայիս ՍՏՁ-ն չի ներառում տեսակների և բնակավայրերի վերանայված ցանկը (2023-2024) և փորձագիտական դիտարկումները:
[96] Ըստ տեղացիների հետ հարցազրույցների և 2014-2017 թվականների ընթացքում հավաքված մեր տվյալների՝ *lynx*–ի վրա ապօրինի կրակոցներ և որս չի եղել:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | սահմանափակու մ | |
| *Rhinolophus ferrumequinum* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | M | պոպուլյացիայի պահպանում- քարանձավների այցելուների թվաքանակի վերահսկում և սահմանափակու մ | >30 |
| *Rhinolophus hipposideros* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | M | պոպուլյացիայի պահպանում- քարանձավների այցելուների թվաքանակի վերահսկում և սահմանափակու մ | >30 |
| *Ursus arctos* | PG11 Ապօրինի որս/սպանություն | M | պոպուլյացիայի պահպանում | >5 |

Ըստ ճնշման և սպառնալիքների աղյուսակի արդյունքների՝ պահպանման նպատակները ուղղված են ներկա պոպուլյացիան պահպանելուն հատուկ հսկողության գործողությունների և սահմանափակումների միջոցով:

## Բնակավայրի պահպանման և տնտեսական գործունեության, դրա զարգացման ներուժի միջև հնարավոր հակասությունների գնահատում

### Բնակավայրի տեսակները

Ինչպես նշվեց վերը, անտառային տարածքներին սպառնացող հիմնական վտանգը կարող են լինել ապօրինի հատումները և հին ծառերի հեռացումը սանիտարական հատումների ժամանակ: Ջրային միջավայրերին սպառնացող հիմնական վտանգը կարող է լինել ջրային ռեժիմի անվերահսկելի փոփոխությունը (հոսանքն ի վեր հիդրոհանգույցների շինարարության դեպքում, ինչպիսիք են փոքր ՀԷԿ-երը, ջրամբարները և այլն): Խոտաբույսային համակեցությունների համար հիմնական սպառնալիքը գերարածեցումն է: Հետևաբար գործողությունների ծրագրում ներառված են կոնկրետ միջոցառումներ:

Տեսակներ

<u>Բույսեր</u>

Echium russicum-ին սպառնացող հիմնական վտանգը գերարածեցումն է, որը կարող է հանգեցնել կենսամիջավայրի ոչնչացման: Խստորեն հանձնարարվում է արածեցման նորմերի հսկողություն: Ինչ վերաբերում է Steveniella satyrioides-ին, այլ սպառնալիք կարող է լինել զբոսաշրջիկների կողմից պոպուլյացիայի պատահական ոչնչացումը: Պոպուլյացիայի պահպանման լավագույն միջոցը տարածքների ցանկապատումն է:

<u>Անողնաշարավորներ</u>

Rosalia alpina-ի և Cerambyx cerdo-ի համար հիմնական վտանգը անտառատնտեսական գործունեությունն է, որը կարող է հանգեցնել ծեր և մեռնող ծառերի հեռացմանը, ինչը հանգեցնում է թրթուրների աճի համար հարմար միկրոբիոտոպերի անհետացմանը: Անհրաժեշտ է անտառահատումների հսկողություն: Callimorpha (Euplagia) quadripunctaria-ի

դեպքում ընթացիկ սպառնալիքներ չեն գրանցվել, այնուամենայնիվ անհրաժեշտ է վերահսկել բնակավայրերի պայմանները և պոպուլյացիայի խտությունը:

Սողուններ

Կոնկրետ սպառնալիքներ և կոնֆլիկտներ չեն նշվում:

Թռչուններ

Մի շարք փաստացի ուղղակի և անուղղակի ճնշումներ և սպառնալիքներ առաջնային են ճանաչվել և գնահատվել տարածքում՝ ելնելով դրանց ազդեցությունից թռչունների պոպուլյացիայի վրա: Ե՛վ օրինական, և՛ ապօրինի անտառահատումները, ինչպիսիք են ծեր և մեռած ծառերի հեռացումը, ամբողջական և ընտրովի հատումները, հանգեցնում են բնակավայրերի կորստի և մասնատման՝ խաթարելով բնական էկոհամակարգերը, որոնցից թռչունները կախված են բնադրելու, կեր փնտրելու և այլ գործունեության համար: Հետևաբար անտառային գործողությունները, օրինական թե անօրինական, հիմնական ճնշումն են, որ էկոհամակարգի մակարդակով զգալի ազդեցություն ունեն թռչունների պոպուլյացիայի վրա: Գիշատիչների ապօրինի որսը պահանջում է համակողմանի միջոցներ, ներառյալ վայրի բնության պահպանության մասին օրենքների կիրառումը և ուսուցումը նրանց շրջանում, ովքեր ներգրավված են որսագողության մեջ:

Բացի այդ, էլեկտրահաղորդման գծերի ցանցի ընդլայնման և Հայաստանում էլեկտրաէներգիայի հարաճուն պահանջարկի հետևանքով այս էական վտանգը, ամենայն հավանականությամբ, կաճի: Հաշվի առնելով զարգացման այնպիսի ծրագրերի իսկայական տարածական բնույթը, որոնք կարող են ընդգրկել տարբեր բարձրություններ և բնակավայրերի ամեն տեսակի ուղղահայաց լանդշաֆտներ խիտ անտառային տարածքներից մինչև մերձալպյան և ալպյան խոտաբույսային համակեցություններ, կարևոր է հաշվի առնել այդ ծրագրերի հնարավոր ազդեցությունները տեղական թռչնաշխարհի վրա: Էլեկտրահաղորդման գծերը երկարաժամկետ հեռանկարում կարող են բախման կամ էլեկտրահարման վտանգ առաջացնել գիշատիչների տեսակների համար, հատկապես նրանց, որոնք որսի ժամանակ ցածր են թռչում (օրինակ՝ մկնաճուռակները և բազեները):

Չկանոնակարգված արշավային զբոսաշրջությունը վտանգված տեսակների շրջակայքում, ինչպիսիք անգղներն են, բացասաբար է անդրադառնում նրանց հաջող բնադրման վրա: Այս վտանգը, ամենայն հավանականությամբ, կմեծանա նաև ապագայում արշավականների հարաճուն հետաքրքրասիրության հետևանքով: Զբոսաշրջության զարգացման նպատակով նման այցելությունների մոնիթորինգն ու կառավարումը առաջնային և հրատապ է:

Վերջապես, անասնաբուծության և արածեցման գործելակերպերը կարող են բնութագրվել որպես հավանական, բայց ոչ փաստացի սպառնալիք, քանի որ չկա համապատասխան տեղեկատվական աղբյուր կամ դիտարկում:

Կաթնասուններ

Ըստ տեղացիների՝ այս շրջանում որոշակի սպառնալիքներ, կոնֆլիկտներ կամ միջադեպեր չեն արձանագրվել՝ կապված գայլերի ու անասնապահության հետ:

# ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

## Գործողությունների ծրագիր (նպատակներ և առաջնահերթ գործողություններ)

Ստորև ներկայացված են մի շարք առաջարկություններ, այսինքն՝ առաջարկված են պահպանման միջոցառումներ 10 տարվա տևողությամբ: Ելնելով 3-րդ բաժնում վերլուծված ճնշումներից և սպառնալիքներից՝ ստորև առաջարկվում է համապատասխան կառավարման միջոցառումների շարք դրանք վերացնելու համար: Պահպանման միջոցառումներն ընտրված են ԵՄ-ի Պահպանման միջոցառումների վերջնական ցանկի[97] վերջին թողարկումից:

Գործողությունների բաշխումը և ժամանակացույցը ներկայացված են հավելված Բ-ում: Գործողությունների ծրագիրը ներառում է, ըստ յուրաքանչյուր միջոցառման, պահպանվող թիրախային տեսակները/բնակավայրերը/տարածքները, միջոցառման կարճ նկարագրությունը, մոնիթորինգի համապատասխան ցուցիչը, տարեկան ժամանակացույցը՝ 10-ամյա կանխատեսմամբ, և առաջարկվող միջոցառման իրականացման պատասխանատու սուբյեկտը:

## Բնակավայրի տեսակները

Աղյուսակ 24-ում ներկայացված են ծրագրի տարածքում բնակավայրերի տեսակների համար առաջարկվող կառավարման միջոցառումները և ակնկալվող արդյունավետության ժամկետը: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է գործողությունների ծրագրում:

**Աղյուսակ 24. Ծրագրի տարածքում բնակավայրերի տեսակների համար առաջարկվող կառավարման միջոցառումներ**

| Բնակավայրի տեսակ | Ճնշումներ և սպառնալիքներ[98] | կառավարման միջոցառումներ[99] | Ակնկալվող օգուտը (H, M, L) և Արդյունավետության ակնկալվող ժամկետը (կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ)[100] |
|---|---|---|---|
| **C2.26 Կարբոնատներով հարուստ օլիգոտրոֆ արագ հոսքով ջրերի բուսականություն** | PL05 Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 - Նվազեցնել բազմանպատակ հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | H/Երկարաժամկետ |
| **C2.27 Արագ հոսքով ջրերի մեզոտրոֆ բուսականություն** | PL05 Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 - Նվազեցնել բազմանպատակ հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | H/Երկարաժամկետ |
| **C2.28 Արագ հոսքով ջրերի էվտրոֆ բուսականություն** | PL05 Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 - Նվազեցնել բազմանպատակ հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | H/Երկարաժամկետ |
| **C3.4 Ցամաքաջրային կամ քարացած** | PL05 Հիդրոլոգիական | MK02 - Նվազեցնել բազմանպատակ | H/Երկարաժամկետ |

[97] https://cdr.eionet.europa.eu/help/natura2000/
[98] Բաժին 'Ընդհանուր գնահատում եվ տարրերի կազմը'
[99] https://cdr.eionet.europa.eu/help/natura2000/
[100] H-բարձր, M-միջին, L-ցածր

| | | | |
|---|---|---|---|
| ջրամբարների տեսակներով աղքատ ցածրած համակեցություններ | հոսքի փոփոխություն | հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | |
| C3.55 Հազվագյուտ բուսականությամբ գետային խճաքարային լեզվակներ | PL05 Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 - Նվազեցնել բազմանպատակ հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | H/Երկարաժամկետ |
| C3.62 Առանց բուսականության խճաքարային լեզվակներ | PL05 Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 - Նվազեցնել բազմանպատակ հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | H/Երկարաժամկետ |
| E1.2 Բազմամյա կալցիումասեր խոտաբույսային համակեցություններ | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| E1.3 Միջերկրածովային չորասեր խոտաբույսային համակեցություններ | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| E2.3 Լեռնային խոտհարքային մարգագետիններ | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| E3.4 Թաց և խոնավ էվտրոֆ և մեզոտրոֆ խոտային համակեցություններ | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| E5.4 Խոնավ բարձրախոտային կամ պտերային անտառի եզրեր կամ մարգագետիններ | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| E5.5 Մերձալպյան բարձրախոտերի և պտերների խոնավ մացառուտներ | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| F7 Բարձիկանման փշոտ թփերի մացառուտներ (այդ թվում՝ տրագականտային բուսականությունը) | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և ուրիշ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | Մ/Միջնաժամկետ |
| F9.1 Ափամերձ թփուտներ | PL05 Հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 - Նվազեցնել բազմանպատակ հիդրոլոգիական | H/Երկարաժամկետ |

| | | | |
|---|---|---|---|
| | | փոփոխությունների ազդեցությունը | |
| **G1.11 Ափամերձ ուռենու անտառներ** | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| **G1.22 Կաղնե-հացե-թեղային խառը անտառներ խոշոր գետերի հուների մոտ** | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| **G1.6 Հաճարկուտներ** | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| **G1.A1 Կաղնե-հացե-բոխային անտառներ էվտրոֆային և մեզոտրոֆային հողերում** | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| **G1.A7 Սև և Կասպյան ծովերի տերևաթափ խառը անտառներ** | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| **G3.9 Cupressaceae կամ Taxaceae ընտանիքների ներկայացուցիչների գերակշռությամբ մերկասերմերի անտառներ** | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | Մ/Միջնաժամկետ |
| **H1 Քարանձավներ** | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 - Կրճատել բացօթյա սպորտի տեսակների, հանգստի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնումը) ազդեցությունը | Մ/Միջնաժամկետ |

Հիդրոլոգիական հոսքի և անտառահատումների հնարավոր փոփոխությունը, օրինակ՝ վառելիքի համար, բնակավայրերի տարածքներում հնարավոր ճնշումներից մեկն է: Գերարածեցումը (կամ ինտենսիվ արածեցումը) նույնպես տարածված ճնշում է: Այսպիսով, առաջարկվում է որոշակի տարածքի համար հատուկ արածեցման կառավարման պլան (ներառված է գործողությունների ծրագրում), որը պետք է առաջին հերթին հաշվի առնի կենսաբազմազանության թիրախային օբյեկտները և պահպանման ասպեկտները՝ ըստ արոտավայրերի արտադրողականության և անասնաբուծության տնտեսության:

## Տեսակներ

<u>Բույսեր</u>

Աղյուսակ 25-ում ներկայացված են ծրագրի տարածքում թիրախային բույսերի տեսակների համար առաջարկվող կառավարման միջոցառումները և ակնկալվող արդյունավետության ժամկետը: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է Գործողությունների ծրագրում:

### Աղյուսակ 25. Թիրախային բուսատեսակների կառավարման առաջարկվող միջոցառումները

| Բնակավայրի տեսակ | Ճնշումներ և սպառնալիքներ[101] | կառավարման միջոցառումներ[102] | Ակնկալվող օգուտը (H-բարձր, M-միջին, L-ցածր) և Արդյունավետության ակնկալվող ժամկետը (կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ) |
|---|---|---|---|
| *Echium russicum* | PA07 Ինտենսիվ արածեցում կամ անասունների գերարածեցում | MA05 – Հարմարեցնել հնձումը, արածեցումը և այլ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | M/միջնաժամկետ |
| *Steveniella satyrioides* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 - Նվազեցնել բացօթյա սպորտի տեսակների և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնումը) ազդեցությունը | M/Միջնաժամկետ |

Անողնաշարավորներ

Աղյուսակ 26-ում ներկայացված են ծրագրի տարածքում թիրախային անողնաշարավորների համար առաջարկվող կառավարման միջոցառումները և ակնկալվող արդյունավետության ժամկետները: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է Գործողությունների ծրագրում:

### Աղյուսակ 26. Անողնաշարավորների կառավարման առաջարկվող միջոցառումները

| Բնակավայրի տեսակ | Ճնշումներ և սպառնալիքներ[103] | կառավարման միջոցառումներ[104] | Ակնկալվող օգուտը (H-բարձր, M-միջին, L-ցածր) և Արդյունավետության ակնկալվող ժամկետը (կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ) |
|---|---|---|---|
| ***Callimorpha (Euplagia) quadripunctaria*** | PB02 Անտառային հողօգտագործման մի տեսակից մյուսի փոխակերպում | MB01 Կանխել (կիսա) կենսամիջավայրերի վերածումը անտառների և (կիսա) բնական անտառների՝ ինտենսիվ անտառային տնկարկների | M/Միջնաժամկետ |
| ***Rosalia alpina*** | PB07 Մեռած և մեռնող ծառերի հեռացում (ներառյալ մնացորդները) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/Միջնաժամկետ |

[101] https://cdr.eionet.europa.eu/help/natura2000/
[102] https://www.eea.europa.eu/en
[103] https://www.eea.europa.eu/en
[104] https://www.eea.europa.eu/en

| | | | |
|---|---|---|---|
| | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/Միջնաժամկետ |
| *Cerambyx cerdo* | PB07 Մեռած և մեռնող ծառերի հեռացում (ներառյալ մնացորդները) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/Միջնաժամկետ |
| | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/Միջնաժամկետ |

Առաջարկվող փորձնական հայտը քսիլոֆագ տեսակների զարգացման համար պիտանի ծառերի՝ որպես հսկողության և պահպանման օբյեկտների գրանցումն է՝ նպատակային տեսակների կողմից դրանց օգտագործման հետագա դիտարկումներով:

Սողուններ

Կառավարման հատուկ միջոցներ չեն պահանջվում:

Թռչուններ

Կարգավորման կարիք ունեցող ամենահրատապ ճնշումներից մեկը անհանգստացնող գործոնն է, որը ծագում է զբոսաշրջությունից և այցերից այնպիսի զգայուն տեսակների բնադրավայրեր, ինչպիսին սպիտակագլուխ անգղինն է (Gyps fulvus): Չափազանց կարևոր է նվազագույնի հասցնել տարածքում զբոսաշրջային գործունեության հետ կապված ազդեցությունները և ապահովել, որ այդ գործունեությունը չվտանգի կենսաբազմազանության նպատակները: Յուրաքանչյուր հետիոտն երթուղի, որը ներկայումս օգտագործվում կամ նախատեսվում է զարգացնել տարածքում, պետք է հաշվի առնի կենդանաբանական գրառումները և խուսափի հազվագյուտ և անհետացող տեսակների բնադրմանը խանգարելուց: Արշավային արահետներում մարդկանց ակտիվության մեծացումը անհանգստացնում է վայրի կենդանիներին՝ առաջացնելով տեղահանումներ: Բնադրող թռչունները, օրինակ, կարող են լքել իրենց բները՝ ի պատասխան մարդու ներկայության, ինչը հանգեցնում է հաջող վերարտադրողականության նվազման:

Թռչունների համար մեկ այլ հիմնական սպառնալիք է բնակավայրերի ոչնչացումն ինտենսիվ անտառահատումների հետևանքով: Տվյալ տեղանքում անտառների մոտ 49%-ը գտնվում է 30° և ավելի զառիթափ լանջերին: Նման անտառներում, հատկապես հարավային լանջերին, էրոզիայի գործընթացը խիստ ակնառու է, իսկ բնական վերականգնումը՝ խիստ սահմանափակ: Դեգրադացված (նախկինում անտառահատված) անտառային էկոհամակարգերի վերականգնումը առաջնահերթ նշանակություն ունի, որն անհրաժեշտ է անհետացող տեսակների պոպուլյացիաների բարելավման և էկոհամակարգերի

ամբողջականությունն ապահովելու համար: Սա ենթադրում է անտառների վերականգնման աշխատանքներ հատկապես անհետացող տեսակների բնակավայրերում:

### Աղյուսակ 27. Թիրախային տեսակների վերահսկման առաջարկվող միջոցառումները

| Տեսակ | Ճնշումներ և սպառնալիքներ[105] | վերահսկման միջոցառումներ | Ակնկալվող օգուտը (H-բարձր, M-միջին, L-ցածր) և արդյունավետության ակնկալվող ժամկետը (կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ) |
|---|---|---|---|
| *Aquila chrysaetos* | PG11 Ապօրինի որս/սպանություն[106] | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| *Aquila pomarina* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան[107] | H/Միջնաժամկետ |
| *Aquila nipalensis* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| *Buteo rufinus* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| *Circaetus gallicus* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| *Circus macrourus* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների | H/Միջնաժամկետ |

[105] https://www.eea.europa.eu/en

[106] PG11 սպառնալիքը ներառում է անօրինական կրակոցներ, սպանություններ և այլն, բայց նաև ներառում է որս: ԲՈԼՈՐ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ որսը Հայաստանում արգելված է և ապօրինի է:

[107] Ամեն տեսակի անտառահատումները (լինեն օրինական, սանիտարական թե ապօրինի) պետք է բացառվեն տարածքներում, հատկապես՝ զարնանը բնադրող տեսակների վրա խանգարող ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար:

| | | | |
|---|---|---|---|
| | | անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | |
| *Crex crex* | PA06 Խոտաբույսային համակեցությունների հնձում կամ հատում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և այլ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | M/ Երկարաժամկետ |
| | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և այլ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | M/ Երկարաժամկետ |
| | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | M/ Երկարաժամկետ |
| *Dendrocopos medius* | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| *Dryocopus martius* | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| | PB07 Մեռած և մեռնող ծառերի հեռացում (ներառյալ մնացորդները) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| *Falco peregrinus* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| | PG12 Ապօրինի բերքահավաք, հավաքում և յուրացում | | H/Միջնաժամկետ |

| | | | |
|---|---|---|---|
| *Ficedula parva* | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| *Ficedula semitorquata* | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | M/ Երկարաժամկետ |
| *Gypaetus barbatus* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 - Կրճատել բացօթյա մարզաձևերի, հանգստի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնում) ազդեցությունը | H/Կարճաժամկետ |
| *Gyps fulvus* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 - Կրճատել բացօթյա մարզաձևերի, հանգստի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնում) ազդեցությունը | H/Կարճաժամկետ |
| *Hieraaetus pennatus* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| | PB06 Ծառահատում կամ նոսրացում (բացառությամբ ամբողջական հատման) | MB05 - Հարմարեցնել/փոխել անտառների կառավարման և շահագործման պրակտիկան | H/Միջնաժամկետ |
| *Lullula arborea* | PA06 Խոտաբույսային համակեցությունների հնձում կամ հատում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և այլ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | H/Միջնաժամկետ |
| *Luscinia svecica* | PA06 Խոտաբույսային համակեցությունների հնձում կամ հատում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և այլ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | M/ Միջնաժամկետ |

| | | | |
|---|---|---|---|
| | PA07 Անասունների ինտենսիվ արածեցում կամ գերարածեցում | MA05 - Հարմարեցնել հնձումը, արածեցումը և այլ համարժեք գյուղատնտեսական գործունեությունը (օրինակ՝ այրումը) | M/ Միջնաժամկետ |
| *Milvus migrans* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |
| *Neophron percnopterus* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 - Կրճատել բացօթյա մարզաձևերի, հանգստի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնում) ազդեցությունը | H/Կարճաժամկետ |
| *Pernis apivorus* | PG11 Ապօրինի որս/սպանություն | MG04 - Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Կարճաժամկետ |

Ի լրումն վերը նշվածի՝ Aquila pomarina, Dendrocopos medius, D. Martius տեսակների համար անտառային գործողությունները պետք է սահմանափակվեն մարտի վերջից մինչև սեպտեմբերի վերջը խանգարումների նկատմամբ զգայուն բնադրավայրերի շրջակայքում: Ինչ վերաբերում է Gyps fulvus տեսակին, բազմացման շրջանում (մարտի սկիզբ - հուլիսի վերջ) պետք է կանոնակարգվի զբոսաշրջային տարերային գործունեությունը նրանց բնադրավայրերի մոտ: Վերջապես, թռչունների ապօրինի որսը արդյունավետ վերահսկելու համար անհրաժեշտ է օրենքների կիրառում և զգոն մոնիթորինգ նոր Էկոպարեկային ծառայության միջոցով:

<u>Կաթնասուններ</u>

Աղյուսակ 28-ում ներկայացված են ծրագրի տարածքում թիրախային կաթնասունների համար առաջարկվող կառավարման միջոցառումները և ակնկալվող արդյունավետության ժամկետը: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է գործողությունների ծրագրում:

## Աղյուսակ 28. Թիրախային կաթնասունների վերահսկման առաջարկվող միջոցառումները

| Բնակավայրի տեսակ | Ճնշումներ և սպառնալիքներ[108] | կառավարման միջոցառումներ | Ակնկալվող օգուտը (H-բարձր, M-միջին, L-ցածր) և արդյունավետության ակնկալվող ժամկետը (կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ) |
|---|---|---|---|
| *Canis lupus* | PJ12 Կլիմայի փոփոխության պատճառով հարակից տեսակների (օրինակ՝ սննդի աղբյուր/որս, գիշատիչ/մակաբույծ, սիմբիոտ և այլն) անկում կամ անհետացում | MJ02 – Կլիմայի փոփոխության ադապտացիայի միջոցառումների իրականացում | M/Երկարաժամկետ |
| | PJ13 Տեսակների բաշխման փոփոխություն (բնական նորեկներ) կլիմայի փոփոխության պատճառով | MJ02 – Կլիմայի փոփոխության ադապտացիայի միջոցառումների իրականացում | M/Երկարաժամկետ |
| *Lutra lutra* | PG11 Ապօրինի որս/սպանություններ | MG04 – Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Medium-term |
| | PL05 հիդրոլոգիական հոսքի փոփոխություն | MK02 – Նվազեցնել բազմաֆունկցիոնալ հիդրոլոգիական փոփոխությունների ազդեցությունը | M/Երկարաժամկետ |
| *Lynx lynx* | PJ12 Կլիմայի փոփոխության պատճառով հարակից տեսակների (օրինակ՝ սննդի աղբյուր/որս, գիշատիչ/մակաբույծ, սիմբիոտ և այլն) անկում կամ անհետացում | MJ02 – Կլիմայի փոփոխության ադապտացիայի միջոցառումների իրականացում | M/Երկարաժամկետ |
| | PJ13 Տեսակների բաշխման փոփոխություն (բնական նորեկներ) կլիմայի փոփոխության պատճառով | MJ02 – Կլիմայի փոփոխության ադապտացիայի միջոցառումների իրականացում | M/Երկարաժամկետ |
| | PG11 Ապօրինի որս/սպանություններ | MG04 – Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | H/Միջնաժամկետ |

[108] https://www.eea.europa.eu/en

| | | | |
|---|---|---|---|
| *Myotis blythii* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 – Նվազեցնել բացօթյա մարզաձևերի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնումը) ազդեցությունը | M/միջնաժամկետ |
| *Myotis bechsteini* | PB08 Ծեր ծառերի հեռացում (բացառությամբ մեռած կամ մեռնող ծառերի) | MB05 – Անտառների կառավարման և շահագործման գործելակերպերի աղապտացում/փոխում | M/միջնաժամկետ |
| *Miniopterus schreibersii* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 – Նվազեցնել բացօթյա մարզաձևերի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնումը) ազդեցությունը | M/միջնաժամկետ |
| *Rhinolophus ferrumequinum* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 – Նվազեցնել բացօթյա մարզաձևերի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնումը) ազդեցությունը | M/միջնաժամկետ |
| *Rhinolophus hipposideros* | PF05 Սպորտ, զբոսաշրջություն և ժամանց | MF03 – Նվազեցնել բացօթյա մարզաձևերի և ժամանցի (ներառյալ բնակավայրերի վերականգնումը) ազդեցությունը | M/միջնաժամկետ |
| *Ursus arctos* | PG11 Ապօրինի որս/սպանություններ | MG04 – Վայրի բույսերի, սնկերի և կենդանիների անօրինական սպանությունների, ձկնորսության և բերքահավաքի վերահսկում/վերացում | M/միջնաժամկետ |

## ԱՏ կառավարման միջոցառումներ

Ստորև ներկայացված է ակտիվ ԱՏ-ներում առաջարկվող կառավարման միջոցառումների համառոտ վերլուծությունը: Նպատակն է ստուգել (և անհրաժեշտության դեպքում հատուկ շտկող միջոցառումներով ապահովել), որ ԱՏ-ներում առաջարկված և ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող կառավարման միջոցառումները համահունչ լինեն և չհակասեն Էմերալդ կառավարման պլանի պահպանման նպատակներին:

Աղյուսակ 29. Կառավարման միջոցառումներ (ԿՄ) Սյքարի ֈ Իջևանի ԱՏ-ներում (ՀՀ-ի կառավարման պլաններից)

| ԿՄ-ի կատեգորիա | ԿՄ վերնագիրը | Գործող/ Գործող՝ պայմաններից ելնելով/ Դեմ | Մեկնաբանություններ/Ուղղիչ գործողություններ |
|---|---|---|---|
| **Հրդեհից պաշտպանության միջոցառումներ** | Նախազգուշացնող նշանների և վահանակների տեղադրում | Գործող | - |
| | Խնջույքի և ծխելու հատուկ սահմանված վայրեր | Գործող | - |
| | Խորհրդակցություններ և հանդիպումներ համայնքների և բնակիչների հետ | Գործող | - |
| | Հրդեհաշիջման գոտիների կառուցում | Գործող՝ պայմաններից ելնելով | Հրդեհային գոտիները պետք է խուսափեն բնակավայրերի  կամ թիրախային տեսակների բնակավայրերի կրճատումից:<br><br>Հրդեհաշիջման գոտիների իրագործումից առաջ առաջարկվում է թիրախային տեսակների մոնիթորինգի աուդիտ:<br><br>Խուսափել թիրախային տեսակների վերարտադրողական ժամանակաշրջաններից:<br><br>Aquila pomarina, Dendrocopos medius, D. Martius և այլ տեսակների համար անտառային գործողությունները պետք է սահմանափակվեն մարտի վերջից մինչև սեպտեմբերի վերջը խանգարումների նկատմամբ զգայուն բնադրավայրերի շրջակայքում: |
| | Ջրամբարների կառուցում | Գործող | |
| | Վերանորոգել/ավելացնել անտառային հակահրդեհային պաշտպանության նոր ճանապարհներ | Գործող՝ պայմաններից ելնելով | Նոր ճանապարհները պետք է խուսափեն բնակավայրերի կամ թիրախային տեսակների բնակավայրերի կրճատումից:<br><br>Առաջարկվում է թիրախային տեսակների վերաբերյալ աուդիտ անցկացնել:<br><br>Խուսափել թիրախային տեսակների վերարտադրողական ժամանակաշրջաններից:<br><br>Aquila pomarina, Dendrocopos medius, D. martius տեսակների համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | անտառային գործողությունները պետք է սահմանափակվեն մարտի վերջից մինչև սեպտեմբերի վերջը խանգարումների նկատմամբ զգայուն բնադրավայրերի շրջակայքում:<br>Gyps fulvus-ի համար չկարգավորվող զբոսաշրջային գործունեությունը պետք է կարգավորվի նրանց բնադրավայրերի մոտ բազմացման շրջանում (մարտի սկիզբ - հուլիսի վերջ): |
| | Հրդեհաշիջման սարքավորումների ձեռքբերում | Գործող | - |
| | Հրդեհաշիջման կամավոր խմբերի ձևավորում | Գործող | - |
| **Անտառների և կենսաբազմազանության պահպանում** | Վարձել անտառի պահապաններ | Գործող | Ընդլայնել հսկողության տարածքը ողջ Էմերալդ տարածքում |
| | Տարբեր սարքավորումների ձեռքբերում | Գործող | Ամենագնաց մեքենաներ, ձիեր, GPS սարքեր և այլն |
| | Անտառի վերականգնում | Գործող | - |
| | Հատումներ հետազոտական և անտառի առողջության պահպանման նպատակներով | Գործող | - |
| **Գիտական ուսումնասիրություններ և մոնիթորինգ** | Գիտական ուսումնասիրություններ, ներառյալ՝ վտանգված տեսակներ, կենսաբազմազանության տվյալների բազաների ստեղծում և պահպանում, խոցելիություն և կլիմայի փոփոխության նկատմամբ ադապտացում և էկոհամակարգային ծառայություններ | Գործող | - |
| | Ոլորտի մոնիթորինգ ընդգրկված կամավորներով. ՀԿ-ներ, դպրոցներ, համալսարաններ | Գործող | - |
| | Մշակել մոնիթորինգի ծրագիր, որը կներառի ցուցիչ տեսակներ՝ էկոհամակարգերի վիճակի միտումները բացահայտելու համար | Գործող | - |
| | Մշակել մոնիթորինգի տվյալների բազա/ծրագրային ապահովում և արձանագրություններ | Գործող | - |

| | | | |
|---|---|---|---|
| | Զբոսաշրջության մոնիթորինգ՝ զբոսաշրջիկների բնապահպանական և սոցիալական ազդեցության կառավարմամբ | Գործող | - |
| | Անձնակազմի և տեխնիկական աշխատակազմի մոնիթորինգ՝ կարողությունների զարգացման և գործնական դասընթացներ կազմակերպելու համար | Գործող | - |
| **Կայուն զբոսաշրջություն, որը ցուցադրում է տեղական և ազգային մշակույթի մի մասը** | Էկոտուրիզմի միջոցառումներ, ինչպիսիք են թռչուններին դիտելը | Գործող | Արգելավայրի տարածքի համար մշակվել են երկու էկո երթուղիներ, որոնք ներառում են թռչուններին դիտելու հնարավորություն:<br><br>Կարևոր է նվազագույնի հասցնել տարածքում զբոսաշրջային գործունեության հետ կապված ազդեցությունները և ապահովել, որ նման գործողությունները չվտանգեն կենսաբազմազանության նպատակները: Ցանկացած արշավային երթուղի, որը ներկայումս օգտագործվում է կամ նախատեսվում է զարգացնել տարածքում, պետք է ծանոթանա կենդանաբանական տվյալներին և խուսափի հազվագյուտ և անհետացող տեսակների բնադրմանը խանգարելուց:<br><br>Արշավային արահետների երկայնքով մարդկանց ակտիվության ավելացումը անհանգստացնում է վայրի բնությունը՝ առաջացնելով տեղահանումներ: Բնադրող թռչունները, օրինակ, կարող են լքել իրենց բները՝ ի պատասխան մարդու ներկայության, ինչը հանգեցնում է հաջող վերարտադրողականության նվազմանը: |
| | Զբոսաշրջային ծառայությունների և ենթակառուցվածքների զարգացում, ինչպիսիք են արահետները, ձիավարությունը, հյուրատները (չկան կոնկրետ գտնվելու վայրի կամ ԱՏ ԿՊ-ի կողմից տրամադրված այլ տեղեկություններ) | Գործող՝ պայմաններից ելնելով | |
| | Զբոսաշրջության տեղեկատվական կրպակի ստեղծում | Գործող | Ներառել տեղեկություն Էմերալդ տարածքի պահպանվող տեսակների և բնակավայրերի մասին |
| | Ժամանցային և սպորտային գործունեություն, ձկնորսություն առանձնացված տարածքներում | Գործող՝ պայմաններից ելնելով | Ինչպես վերևում |
| **Իրազեկության բարձրացում, կամավորություն և այլն** | Անտառային տարածքներին հարակից համայնքների բնակիչների իրազեկման բարձրացում, հատկապես դպրոցներում | Գործող | Ներառել Էմերալդ տարածքին կից համայնքը |

| | | | |
|---|---|---|---|
| | Հարակից համայնքների և տեղական այլ ՀԿ-ների ներկայացուցիչների ներգրավում | Գործող | Ներառել Էմերալդ տարածքից շահագրգիռ կողմերին |
| | Անտառային տնտեսության կայքի ստեղծում և սպասարկում | Գործող | Տեղեկացնել կայքի ադմինիստրատորին Էմերալդ տարածքի մասին տեղեկատվություն զետեղելու անհրաժեշտության մասին |
| | Տարբեր կամավորական նախաձեռնությունների կազմակերպում անտառների վերականգնման, վայրի բնության մոնիթորինգի և այլ միջոցառումների համար | Գործող | Ներառել համայնքը, որն ակտիվ  է Էմերալդ տարածքում |

## Գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները. i. մարդ, ii. ժամանակ, iii. ֆինանսներ

Կառավարող/Տարածքի կառավարման մարմին

Ինչ վերաբերում է Էմերալդ տարածքի կառավարող մարմնին, ՇՄՆ-ն կվերահսկի Էմերալդ տարածքի կառավարման համար պատասխանատու ղեկավար մարմնի ստեղծումը և կազմակերպումը: Այդ ղեկավար մարմինը կընդգրկի ներկայացուցիչներ բոլոր շահագրգիռ կողմերի խմբերից՝ ապահովելու, որ որոշումների կայացման գործընթացում դիտարկվեն տարբեր տեսանկյուններ և շահեր: Այդպիսի կառավարման կառույցը կարող է բարձրացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Այն կարող է հանգեցնել ավելի հավասարակշռված որոշումների կայացման, բայց կարող է նաև բարդություններ առաջացնել հակասական շահերի հաշտեցման հարցում: Կառավարող մարմինը պետք է անհրաժեշտ կարողություններ և ռեսուրսներ ունենա տարածքի արդյունավետ կառավարման համար: Կարող է այլ համապատասխան պետական մարմինների, ՀԿ-ների և տեղական իշխանությունների մարմինների հետ համագործակցության անհրաժեշտություն առաջանալ: Ղեկավար մարմինների գործառնական կանոնները կսահմանվեն ՇՄՆ-ի կողմից և պետք է հարմարեցվեն շրջակա միջավայրի պայմանների, հասարակության կարիքների և առաջացող բարդությունների փոփոխություններին: Կանոնների և կառավարման ռազմավարությունների կանոնավոր վերանայումները և թարմացումները վճռական նշանակություն ունեն ադապտացիոն կառավարման համար:

Ֆինանսական ռեսուրսներ

Ֆինանսական աղբյուրը ԿՊ-ի իրականացումն ապահովելու համար կենտրոնական կառավարությունն է և նրա ամենամյա բյուջեի հատկացումները: Ապագայում ՇՄՆ-ի կողմից պետք է ներդրվեն նաև ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ վերահսկվող էկոտուրիզմի և անտառների կայուն կառավարման միջոցով: Բացի այդ, կառավարության որևէ գործողություն, ի նպաստ տարածքի պահպանության համայնքային շարժումներին կամ նախաձեռնություններին, նույնպես շատ ողջունելի է և պետք է դառնա առաջնահերթություն:

Զուգահեռաբար և առաջարկվող առաջնահերթություններին և կառավարման գործողություններին համահունչ՝ ՇՄ նախարարությունը պատրաստ է մասնակցել եվրոպական ու միջազգային հետազոտական ու կենսաբազմազանության կիրառական ծրագրերին, որոնք ֆինանսավորվում են միջազգային կազմակերպություններից, ինչպիսիք են, օրինակ, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (ՄՀԸ/GIZ), ԵՄ-ն, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ/USAID), Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՀ), LIFE+ և Interreg – Տարածքային համագործակցությունը: Վերջինս կարող է էապես նպաստել սահմանված պահպանման նպատակներին:

Մարդկային ռեսուրսներ

ՇՄՆ-ն նաև պատասխանատու պետք է լինի մոնիթորինգի անձնակազմի և ԿՊ-ի իրականացման իրավասու մարմնի հատկացման հարցում: Ավելին, ներկայիս ԿՊ-ն պետք է ինտեգրվի ԱՏ-ի գործող ԿՊ-ներին:

Էկոպարեկության նոր օրենք

Երբ Էկոպարեկային ծառայությունը նախաձեռնություն է սկսում ծրագրի տարածքում (համաձայն «Էկոպարեկային ծառայության մասին» նոր օրենքի[109]), կարևոր է կազմակերպել տեղեկատվական և ուսուցողական միջոցառում ԿՊ-ի ընդհանուր նպատակների, տարածքի կարևորության և ԿՊ-ի միջոցառումների վերաբերյալ: Պետք է ուշադրություն դարձնել Գործողությունների ծրագրի հատուկ պահպանության կառավարման միջոցառումներին, ինչպիսին է ապօրինի սպանությունների վերահսկումը/վերացումը:

Էկոհամակարգային ծառայություններ

Առաջարկվում է նաև ապագայում SWOT[110] (ուժեղ-թույլ կողմեր, հնարավորություններ, սպառնալիքներ) կամ էկոհամակարգային ծառայությունների տեխնիկատնտեսական հիմնավորում, որը ներառված է Գործողությունների ծրագրում: Ուսումնասիրության նպատակներից մեկը կլինի տարածքի ներսում տնտեսության և էկոհամակարգային ծառայությունների գրանցումը, տեղաբնակներին իրենց եկամտի աղբյուրների վերաբերյալ հարցաթերթիկներ տրամադրելը և տարածքի էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ SWOT-ի վերլուծության և տեխնիկատնտեսական հիմնավորման առաջարկությունները՝ համաձայն պահպանության կառավարման հատուկ պրակտիկայի և միջոցառումների: Կոնկրետ ուսումնասիրության մեջ մի շարք հարցեր կարող են շոշափվել, օրինակ՝ որն է Էմերալդ տարածքի կառավարման պլանի ֆինանսական կայունությունը, ինչպես և ինչ ժամանակաշրջանում են ազդել հիմնական էկոհամակարգային ծառայությունները (օրինակ՝ անտառներ և արոտավայրեր) և զբոսաշրջային գործունեությունը, ինչպիսի ֆինանսական խթաններ կարող են լինել ԿՊ սխեմայով էկոհամակարգային ծառայությունների փոփոխության համար, ինչ դրական ազդեցություն կա եկամուտի վրա և այլն:

Սիներգիաներ

